



Բ Ա Ձ Մ Ա Վ Է Պ

Հ Ա Ն Դ Ի Մ Ա Ր Ա Ն

Հ Ա Ն Դ Ի Մ Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն

Հ Ա Յ Ա Ձ Գ Ն

ՆԻ ԻԻՐ ԱՌ ՄԱՐԿՈՒԹԻՒՆՆ ԸՐԱՄ ՕԳՈՒՏՆԵՐՆ

« Ազգ. դպ. և ազգ. երթայ և աշխարհս »
(Հայաստան) յաւիտեան կայ) :

Այս տխուր բայց բազմիմաստ ճշմարտութիւնը մեր բանախօսութեան խորագիր դրած ժամանակ, համոզուած ենք թէ ինչպէս մենք՝ այսպէս նաև օտարազգիք պէտք չէ որ արդի Հայաստանի կամ Հայոց սահմանափակ և ընկճեալ հորիզոններուն մէջ կենան, ուստի հայ հարստութեանց ետևէն անցան դացին նաև խուժադուժ ազգեր և բռնաւորներ : Պէտք չէ ժամանակիս թշուառ որպիսութիւններէն չափենք անոր էութիւնն, ինչպէս ուզեցին չափել արդի բարձրաստիճան քաղաքագիտնոց ոմանք 'ի վեհաժողովն Պեռլինի և յայլ համախմբութիւնս Անգլիոյ :

Այլ ընդհակառակն, անոր հնաւանդ պատմութեան և կենդանի աւանդութեան թեւոյր վրայ յեցած, (զոր կ'ընծայեն այսօր բաց 'ի տոհմային և օտարազգի մատենագրաց 'նոյն իսկ ամենահին ժամանակի արձանագրութիւնք և այլ յիշատակարանք ազգաց) : Բարձրանալը հնոյն Հայաստանի գեղեցիկ

և ընդարձակ հորիզոններուն վրայ, յորոց անցաւ փառաւորապէս մեր թուականին նախընթաց 20 դարուց մէջ հայ ազգն : Իւ այնպէս անոր անցելոյն մեծութեանը հետ՝ նոյնպէս առ մարդկութիւնն ըրած մեծամեծ ձեռնտուութեանցը նկատող կ'ուզենք ըլլալ :

Յիրաւի, այն աշխարհն՝ որ այսօր գոգցես ամեն կողմէն անքաղաքակա նացեալ յազգաց շրջապատեալ, միշտ տխուր հարստահարութեանց տեսարաններ կը ներկայացընէ հետախուզողին աչացն առջև, երբեմն նա ինքն կեդրոն էր բոլոր արեւելեան ազգաց կամ հինաւորոցն Ասիոյ :

Դիտոյն Հայաստան, որ այժմ կապտեալ է յիւր անցեալ մեծվայելութենէն, հարստահարեալ 'ի խուժադուժ ժողովրդոց և ամենուն կարեկցութիւնն առ ինքն կը դրաւէ, երբեմն ժամանակի իւր միահեծան իշխանութեան դահլիճը վրայ բազմելով, Յունաց և Հռովմայեցոց, Պարսից և Մարաց, Ասորեստանեայց և Եգիպտա-

ցւոյ հետ կը մըցէր, իւր վարչութեան և խնամուքը ներքե յանձնուած բազմաթիւ ազգաց երջանկութիւնը պահելու նպատակաւ:

Միով բանիւ, այն յոքնաձիր և ճարպիկ ազգն, որ որ և իյէ ժամանակ՝ մը և է յառաջդարձութեան ընդունակ է, այսօր գողցնա կիսով չափ և յանիրաւի իւր հայրենի հողին վրայէն արմատախիլ եղած և ՚ի բազմաշխարհ օտարութեան՝ Ասիոյ և Եւրոպիոյ և թերեւ իսկ նորոյ աշխարհի քաղաքաժողով մարդկան ընկերութիւնները կը փայլեցնէ: Եւ մանաւանդ թէ Հայք իրենց հաւատարիմ և ամենազգի պաշտամամբը՝ աւանուն համակրութիւնն յիշեանազրաւելէն դեռ չեն դադրած:

Ձեռք սխալիր բռն թէ հայ ժողովուրդը նմանօրինակ այն տնկոց՝ որոնք իրենց հիւթով կը սնանին, այնպէս սնաւ մինչև ցայսօր աւելի իրեն բարոյական զօրութեամբն և բնատուր գործունէութեամբ: Եւ որ ընդ այնքան յեղափոխութիւնն բաղդին՝ կրցաւ պահել զեռ իւր հայութեան կենսական սկիզբն և յաջորդութիւնն, նա ինքն անցելոյն մէջ ոչ միայն իւր անընդհատ դադրականութեամբն, երկրագործութեամբն և վաճառականութեամբը՝ հեռաւոր և մերձաւոր ժողովուրդները կը կերակրէր. այլ նոյն իսկ իւր զինուորական հանճարովն և մարդասէր բարութքը, շատ հարստահարեալ ազգաց եւ ձեռք կարկառեց:

Բանանք հին ազգաց պատմութիւնն և զհայ ազգը պատու չգիտութեանց վարագոյրը: Կը տեսնենք արդարեւ թէ չկայ չլիւն մը ժամանակի, չկայ նշանաւոր հանգէս մը, եթէ քալուքականութեան ըլլայ և եթէ զինուորական ասպարիզի մէջ, յորում հայ ազգն ևս մասն ունեցած չըլլայ:

1. Վասն զի ինչպէս Հայոց աշխարհն, այսպէս նաև ազգին պատմութիւնն արեւմտեայց լաւ ծառնօթ չէ: Այս պատճառաւ Հայոց մեծամեծ արարածոց շատերը Պարսից և Մարաց ընծա յուած են: Սակայն ուղիւ և հմուտ քննադատ մը ուշ զննելով անոր աշխարհագրական դիրքը միայն կարող է յայտնի տեսնել այն վերկական:

Ամեն մատենագիր, մանաւանդ թէ պատմութեան ամեն էջ, գողցես ալ, մայ ստիպուած է անմահացնել այն ազգին և աշխարհի յիշատակներն: Մանաւանդ՝ եթէ հայ և արմէն ձայնից հետ՝ ուշ զննէք նոյնպէս մարտի, պարսիկ², պարթեւ³ և արշակունի վերագրներուն, որոնց ներքե յաճախ հայ ազգն և անոր գործերը ծածկուած են: Վասն զի Պարսիկը և Մարը նախ՝ Հայոց հետ ունեցած ազգականութեան, կրօնակցութեան և քաղաքական յարաբերութեանց պատճառաւ, երկրորդ՝ ընդհանրապէս ալ մեծամասնութիւն ունենալուն համար, յաճախ՝ հին և նոր պատմագրաց ուշագրութիւնն ևս իրենց վրայ դարձուցին: Պէտք է ուշ զննել երբեմն փոխաբան, փոխիկեցի ձայներուն ևս. որովհետև Հերոդոտոս և այլք զՀայս փոքուն Ասիոյ և զգործս նոցա, այդ անուամբք կը յիշատակեն: Ուր թողունք ապա Վրաց, Աղուանից, և ուրիշ հարկատու աշխարհաց մէջ հանդիպած արարուածներն, որոնք Հայոց քաղաքական ազդեցութեամբը կը գործուէին:

Ուրեմն այս ամենայն չիփօք և երկ.

1. Ստրաբոն իւր Ա. գրոց 70 և 71 երեսին և ԺԱ. գրոց 804 երեսին մէջ՝ կ'ըսէ՝ Թէ Մարը և Արիք, Արամացիք, Ասորեստանցիք, Արաքացիք և Արմէնք ազգակից են միմեանց և տարազուր իրարու նման իսկ Դիոգոր Միկիլիացի յայնչապէս կը չիփօք զՀայս ընդ Մարաց՝ ըսելով. « Մարը (Հայք) ընդ Սփրատ գետ կը ասնին զվաճառս ՚ի Բաբելոն: Սակայն ամենայն ոք գիտէ՝ Թէ Սփրատ գետը Մարաստանէն հեռի է: Եւ Հերոդոտոս իւր Ա. գրոց 194 գլխուն մէջ՝ կ'ըսէ՝ Թէ Հայք էին այն գետի վաճառականներն որ նաւուք երթային մինչև ՚ի Բաբելոն:

2. Հուկտանիոս ՚ի գիրս վաճ. գլ. ԺԱ. Թղթ. 46, զՊոնտոս ծով և անոր վաճառականութիւնը Պարսից կու տայ՝ որով խոշտ Թի բացեալ էին: Այսպէս նաև Հայաստանի Սփրատ և Տիգրիս գետերն, որք հազիւ Թէ կը հասնին ՚ի վերէն սահմանաձայնս պարսկաստանի՝ աւանց կու տայ:

3. Ստրաբոն ԺԶ. էջ 1081 յետ յիշելոյ ըզգործն Պարսկացի ճարտարաց յԱրիարեսն, անգէն կը յուսելու Թէ Տիգրանի քան զամենեւին առաւել զօրացաւ:

գիմութիւնը վերցնելու և հայ ազգին գործած բարերարութիւնքն յընթացս ժամանակաց աւելի լուսաւոր երևցնելու համար, լաւ կը համարինք նախ քան զամենայն որոշել հնոյն Հայաստանի կամ Արմենիոյ աշխարհագրական սահմանն: Ապա հայ ազգի ծագումն և հնութիւնը պատմաբանօրէն ստուգել:

Այնուհետեւ կարելի չէ այլ ևս տարակուսիլ թէ Հայաստանի սահմանաց մէջ գործուած ամենայն նշանաւոր

գէպք և յառաջախաղաքութիւնք՝ կամ ուղղակի հայ ազգին պատկանելի են, ինչպէս պարտիզէ մը ելած արդիւնքն՝ անոր մէջ անած ծառերուն, և կամ անուղղակի անոնց կը վերաբերին: Վասն զի հիւսիսային ազգերէն շատերը կամ Հայաստանի վրայ պատուաստուած և կամ անպտուղ բաղնիքներու նման անտի ընդունելով քաղաքականութեան և քրուեստից նախատարերքն՝ այնպէս նախնական ժամանակաց մէջ կը դործէին:



ՎՈՒԻ Ա.

Հայաստան կամ Արմենիա. — Հայկ Հայոց նախնայր և անոր յաջորդարիւն. — Հայ ազգի ներքին գաղաքականութիւնք կամ քնական աշխարհակալութիւնք, և անոնցմէ յառաջ եկած օգոստներն: — Հաստատիք նկարագրական, Արարատայ, Մշոյ, Արշարունի և Մանաւանի քաղաքացեանց:

Ասիոյ պէս բազմամարդ և ընդարձակ մասին կեդրոնը գտնուող այն

ամենագեղեցիկ աշխարհն (Մեծ Հայք), նախապատմական ժամանակաց մէջ երկը մեծամեծ գէպքերով նշանաւոր եղաւ, կ'ուզեմ ըսել Ա. ստեղծագործութեամբ առաջին նախահօր մարդկութեան. Բ. փրկաւէտ բնակութեամբ երկրորդ նախահօրն յետ ջրհեղեղին, և հուսկ 'ի վախճանի գեղեցիկ հիւրընկալութեամբ թորգոմեան ազգիս նահապետին Հայկայ, Հիւսիսէն շրջապատեալ է նա կուր գետով, կովկա.

սու¹ և Մոսկեկան լերանց չղթանե-
րով, Հարաւէն կորդուաց և Տարուսի²
գօտիներով, Բարեկնից՝ կապկից կամ
վրկանայ ծովով և Արարպատական³
և Պարսից աշխարհաւ: Իսկ յարեմաից
Եփրատ գետով կը սահմանուի: Սա-
կայն չենք կրնար բաժանել զՓոքր
Հայս 'ի Հայոց Մեծաց, որ կը ձգուի
մինչև ցՍև ծով և ցՍևիս գետ, առանց
բաժանելու այն մասին մէջ եղած ա-
րարուածոց պատմութիւնն՝ ի պատմու-
թենէ վերջնոյն, վասն զի ինչպէս Հա-
յաստանի բազմն՝ այսպէս նաև անոր
սահմանները ժամանակի այլ և այլ չըր-
ջաններու մէջ մեծցած և պզտիկցած
են. այսմ ևս պէտք ենք ուշ դնել:

Այժմ վերադառնալով մեր ազգին
ժազման և նախնական բնակութեանն
'ի Հայաստան, կ'ուզենք համառօտիւ
անցնիլ, նախ մեր նիւթէն չի խոտորե-
լու համար, և երկրորդ այլուր⁴ ընդ-
արձակօրէն ապացուցած ըլլալով ըստ
զօրեւոյ արդի գիտութեան քննադա-
տութեանը:

Ինչպէս ամեն հին ազգաց՝ այս-
պէս ալ Հայ ժողովրդեան ծագումը՝
անյիշատակ և նախապատմական ժա-
մանակի խորը թաղուած է. սակայն
այս տարբերութեամբ միայն, որ մեր
ազգի աւանդութիւնը, խառն ընդ
քաղզէականին, ոչ Յունաց պէս զինքը
յերկրէ բուսած կը համարի, և ոչ իսկ
Հնդկաց և Եգիպտացւոց նման յերկնից
և կամ յանէակ դից իլած, այլ յարե-
թածին թորգոմայ կամ թակկադի ան-
միջական յաջորդ Հայկ նահապետէն
սերեալ:

Բայց թէ ինչ ժամանակ եղաւ անոր
բազմանալն, որով առթիւ և կամ ուս-
տի գաղթական եկաւ Հայ ժողովուրդն
'ի Հայաստան, և նախ հաստատեցաւ
'ի նահանգավասպուրականի և Արարա-

տայ. այս կէտերս ըստ Մարիբասեան¹
աւանդութեան խիստ յայտնի են,
այսինքն, Բարեկնի խառնակութենէն
քիչ ետքն, Բելայ կամ Ներքովի բլու-
նակակութենէն ազատ միալու պատ-
ճառաւ: Իսկ արեւելեան հնութեան
պարապող գիտնոց մէջ ամենամեծ
խնդրոյ նիւթ եղած է և դեռ անլուծա-
նելի հանգոյց մը կը համարուի:

Սակայն այս արեւելագէտներէն Ռա-
լինսոնի², Լընորմանի,³ և Լուզովի-
կոս տը Ռուպերի կարծիքն իւր իւր որ-
չափ որ կը տարածայնին իրարմէ, բայց
յայսմ՝ տոհմային և քաղզէական ա-
ւանդութեան հետ կը միաբանին ըսե-
լով թէ Հայ ազգն ամենահին ժամա-
նակէ 'ի վեր ֆուշեաններէն կամ 'ի
Բարեկնէն գաղթական եկած է 'ի Հա-
յաստան, որովք այն ժամանակի յա-
ռաջացեալ և բարդաւաճ ժողովուրդ-
ներն էին: Աղեքսանդր բազմալէզ⁴
առ Եւսեբիոսի Պամփիլացւոյ համա-
ձայն Մարիբասեան պատմութեան՝ 20
դար անդր կը ձգէ նախ քան զԲրի-
տոս՝ Հայ ազգի հնութիւնն, և անոր
մէկ նշանաւոր պատերազմն և յաղթու-
թիւնը մէջ կը բերէ ընդդէմ ֆանա-
նացւոց կամ ֆրիւնիկեցւոց:

Հայոց վսեմախոհ նահապետին այն
քաղաքականացեալ այլաբանէն ելլե-
լուն և դէպ 'ի հիւսիսակողմանս հա-
տուած ելուն գեղեցիկ նպատակն ան-
ժխտելի ապացոյց է, թէ նա ստուգիւ-
կեկրոպսի և կադմոսի նման իմաս-
տութեամբ և ազնուականութեամբ⁵

1. Մ. Խորենացի. Ա. գլ. Ժ. էջ 52:

2. Թարգմ. Հերոդոտոսի:

3. Առեւելն Հնախ. Արեւ. հտ. Բ. էջ 364:

4. Եւսեբիոսի վկայութեանը վրայ հաստա-
տուած է ըսէ՛ թէ 20 դար նախքան զԲրիտոսոս,
այսինքն Աբրահամու ժամանակ Հայք արշաւե-
ցին Բանանացւոց (Փիւնիկեցւոց) վրայ և անոնց
յաղթելով՝ Աբրահամու եղբորորդին (Գրվա)
գերի բռնեցին, որովք Աստուծոյ հրամանաւ 'ի
Փիւնիկէ (Բանան) եկած էին բնակելու ըստ Ս.
Գրոց: Իրոք կը հաստատեն Պոչար իւր Դ. գրոց
ԼԴ. գլխուն մէջ թէ Փիւնիկեցիք 'ի Բանանա-
ցւոց յառաջ եկած էին: (Տես Եւսեբիոս Պամ-
փիլացի Պատր. Աւետ. հտ. Բ. Թ. գրք.
գլ. Ժ.):

5. Մարիբասեան պատմութիւնն լատ. ևս կը

1. Բուզանդ. Դպր. Ե. գլ. ԺԷ: Մ. Խորե-
նացի. Աշխ. ԻԶ: Սարգսն ԺԱ: Պաղտոս.
Ե. 13:

2. Պաղտոս, Սարգսն ԺԱ:

3. Բուզանդ. Դպր. Ե. գլ. Ը:

4. Տեսութիւն Մ. Խորենացւոյ և անոր աղ-
բերաց վրայ:

պատուական անձն մի էր. այսպէս ուրեմն անոր առ մարդկութիւնն ընելիք բարիքն ևս պէտք էր որ նպատակին համեմատական ըլլային:

Առաջին գալուստ նախնւոյն մերոյ՝ ոչ միայն կը կազմէ Հայաստանի և հոն բնակող ժողովրդոց տիտղոսն որուն վրայ կը մնայ տակաւին անմահ ընդ այնչափ յեղափոխութիւնս ազգաց և ժամանակաց, այլ նա ինքն Հայկ կ'ըլլայ առաջին բարերարն ազգի մարդկութիւնն. վասն զի ինքն եղաւ զազգութեանութեամբ առաջին չարժանի տուողը բազմամարդութեան և քաղաքականութեան Ասիոյ հիւսիսային աշխարհաց: Իրմէ յառաջ գրեթէ անմարդի՝ էին և զխոփին անմշակ այն կողմերը:

Հայք իրենց դիւցազին առաջնորդութեամբ տիրելով՝ այն վայրադատուն մարդկանց, անդէն և անդ ձեռք կը գործեն շինութեան և մշակութեան:

Ապացուցանելու համար, թէ հայ ժողովրդեան վախճանն էր գաղթականութեամբ լեցրնել և չէնցընել այն ամայի երկիրներն և ամենուրեք քաղաքականութիւն տարածել, բաւական է

հետտուտէ շարք նախահօր մեծութիւնն, ըսելով: « Սա 'ի մէջ սկսիցն (իշխանացն Բաբելոնի) քաջ և երևելի լեալ ընդգլխակաց ամենեցուն, որք ամբառնային զձեռն միապետելի վերայ ամենայն սկսիցն և գիւցազանց, սա տմարած ըլլէ ձեռն ընդգլխակարութեան Բելոյ: Նոյն ժամանակ զորդին իւր զԱրամեակ 'ի Բաբելոնի, չու աւարտալ գնոյ յերկիրն Արարատայ (Արարատոյ կամ Արարգայ, ըստ սեպածն արձանագրութեանց Ասորեստանայց) որ է 'ի կողմանս հիւսիսայն »:

1. Թէպէտ և ըստ Մարիբաւսեան աւանդութեան և անգիր զրուցաց աշխարհիս, յետ ջրհեղեղին՝ երբ մարդկութիւնը խաղաց 'ի Սենաար կամ 'ի Բաբելոն, առ երկայնանսիւս (անշուշտ Տորոսի) միով լեռամբ բնակեալ Պացին ոմանք, իսկ անօգուտ սեղ. վասն զի նշնը կը յաւելու՝ թէ « լինի արք ասկաւք և ցիր և ցան », այսինքն է վայրենիքը և առանց նշանակութեան: Մահաւանդ որ աւելի ուշագորութեան կէտ մ'է միայն հարաւային կողմանէ Արարատեան աշխարհիս կ'ըսէ նա. իսկ կողմանք հիւսիսի Հայոց գայտետանը կը սպասելին:

2. « Ինքնակամ հնազանդեալ նոցա գիւցազին (այսինքն Հայկա) կ'ըսէ քաղցեական աւանդութիւնն:

դիտելանոնց արշաւանաց կամ աշխարհակալութեանց եղանակն: Ոչ երբէք միախուռն կ'ընթանան, և ոչ իսկ վրանաբնակ ժողովրդոց և հրոսակներու պէս աւերելով կ'անցնին, ինչպէս ուրիշ բարբարոսաց արշաւանաց, և նոյն իսկ երրայական ժողովրդեան ընթացից մէջ միշտ տեսնուեցաւ. որով կ'իմացընեն թէ այս ինչ կամ այն երկիրն իրենց նպատակ դրած են, և կամ պարզապէս զաւարառութիւնը: Բայց հայ ազգի գաղթականաց ոճը բոլորովին տարբեր է: Ուր կը հասնին, հոն իրենց կրտսեր որդեաց կամ ուրիշ ազգականաց ժառանգութիւնը կը հաստատեն. ամեն տեղ նորանոր քաղաքներ և բնակութիւն կը կանգնեն. իրենց ընթացած հետոցը վրայ՝ նահապետաց անուանց, մշակութեան և մեծամեծ արարածոց յաղթական կոթողներ՝ կը թողուն, և այնպէս անդրադոյնս կը յառաջնին 'ի հիւսիսակողմանս: Արդարև շատ բարձր և վսեմ ըլլալով հայ ազգին այս տեսութիւնը, անոր համար ամեն ամայի աշխարհը՝ անոնց իրեւսիրելի հայրենիք կ'երևի, և ձինսապատ լեռանց շղթայքն անգամ՝ դիրանցանելի ճամբաներ կը դառնան:

Արդեօք այսպիսի անընդհատ գաղթականութեանց պատճառան է որ մինչև ցմահն Հայկայ, որ հաւանօրէն հարիւրաւոր տարիներ ապրեցաւ, նահապետաց երկայնակեցութիւնէն չափելով, բնաւ միապետական կամ թագաւորական իշխանութեան հետք չի տեսնուիր, այլ մանաւանդ մինչև ցԱրամ դեռ կը տէն նահապետական առաջնորդութիւնն: Արդեօք յանուն Հայկայ հայկեան ըսուած գաղթականութիւնն ևս

1. Որոնց հնազանդն են Ազգանան Ժառանգութիւնն և Հարք անուանեալ լեռնադաշտակն. որուն համար կ'ըսէ Յով. Աղ. Պ. թէ Հայկայ մահուանէն վերջն անոր հպատակ ժողովուրդներն այդ անունը տուին, Հայկայ՝ զանոնք հայրաբար խնամելուն, երկիրը մշակելուն և շատ քաղաքներ շինելուն պատճառաւ: Ինքնակամ Հայկաւն գիւցն, Հարք կամ Հայոց Չորն, Բերեզմանք ըսուած տեղն: Արմաւիր քաղաքն և Արտիմէք:

սպառեցաւ անոր հետ 'ի միասին այն ընդարձակածաւալ երկիրներուն մէջ, արկածից բնութեան և գազանաց զոհ ըլլալով. թէ Հայկայ սերընդէն՝ յետ ժամանակաց Արմենակայ անուամբ՝ արմենական աւելի քաղաքակիրթ և բազմաթիւ գաղթականութիւն մի յա. ջրգեղով փոխանակ առաջնոյն՝ զբա. կանապէս անոր գործն յառաջ տա. բաւ:

Այսպէս մարթ է կարծել Պ. Լընոր. մանի՜ հետ. նախ՝ Հայկ նահապետին իւր առաջին տեղը, կ'ուզեմ ըսել Հարք վերադառնալուն և հօն վախճանելուն պատճառաւ. վասն զի աստ գոգցես հայկեան ցեղի՝ գաղթականութեան շարունակութիւնն կ'ընդհատի ժամա. նակ ինչ: Երկրորդ, վնասայ արմենա. կան կոչուած սեպաձև արձանագրու. թեանց ոչ միայն արդի (զրաբար) հայերէնին աննման ըլլալուն համար, այլ նոյն իսկ անոց իրարու հետ ունե. ցած տարաձայնութենէն՝ դատելով:

Առանց բոլորովին բացասելու վերո. յիշեալ ենթադրութիւնն, մենք մի և նոյն հայկեան ցեղի՝ բայց այլևայլ գաղթականութիւններ աւելի հաւա. նական եղած կը համարինք: Հարկ չկայ արմենական գաղթականութիւնը տարբեր ցեղէ համարիլ, եթէ իրօք տարբեր գրականութիւն կամ քաղա. քականութիւն ունեցած ևս ըլլան: Ինչպէս մեր թուականին առաջին, եր. կրորդ, երրորդ, և չորրորդ գրուոց մէջ կրկին և տարբեր լեզուով կամ գրակա. նութեամբ կը վարուէին Հայք, այսինքն է Յունաց, Ասորաց և Պարսից, թէ և հա. յերէն խօսակցութիւնը միշտ կար: Այս. պէս ալ կրնային ընել և ըրին անշուշտ հայկեան և արմենական գաղթականու. թեանց Հայերը, վարելով փոփոխակի

Ասորեստանեայց սեպաձևներն և Ե. գիպտացոց նշանագրերն: Ուրեմն ար. մենական գաղթականութիւնն որչափ և յետոյ համարելու ըլլանք ժամա. նական, որչափ և երեւիլ քան զառա. յինը, սակայն միշտ անժխտելի կը մնայ այս ճշմարտութիւնը, թէ հայ. կեան գաղթականութենէն առած էր իւր ծագումն և հետևապէս անոր շա. րունակութիւնն էր: Անոց՝ հայկեան կամ նախնական գաղթականութենէն ունեցած առաւելութիւնքն՝ արգասիք էին բաղամամարդութեան և բարգա. ւաճման հայկեան սերնդոց. վասն զի Հայոցներքին գաղթականութիւնքն որ. չափ և անընդհատ եղած ենթադրելու ըլլանք, սակայն յաճախ անգամաւորա. կան միջոցներ կ'անցնէր մէկ գաղթա. կանութենէն ցմիւսն: Հայք մինչև որ ա. ղէկ չի զօրանային իրենց ժառանգած երկիրներուն մէջ, և նորանոր յաջորդ. ներ չի փոխանակէին զհաւս, սովորու. թիւն չունէին ոտն յոտանէ փոխել:

Աւստի այս ամեն բանն 'ի նկատի ու. նելով, չենք տարակուսիր ըսելու՝ թէ հայ ազգի գաղթականութիւնն ընդ հիւսիսի՝ ոչ երբեք սպառեցաւ, և ոչ իսկ իւր առաջելութենէն զազրեցաւ: Այն գաղթականութեանց ժամանակ՝ զոյգ ընդ ազգահամարի և ընդ կարգի ծը. նընդոց՝ կ'ընթանայր նաև հին երկրա. գրութիւն աշխարհին. այսինքն է, այս. պիտի կարգ և օրէնք՝¹ կը տեսնուին 'ի նոսա: Բազմախալուն պէս՝ ան. գրանիկը պիտի փոխանակէր առ ժա. մանակ մի, ոչ միայն զիրաւունս հօրն, այլ նոյն իսկ զժառանգութիւն բնակու.

1. Նախ Մ. Խորեն. Ա. գլ. ԺԲ. կը տեսնենք որ Հայկ րովմազակ ազգը իւր անգրասիկ որ. գւոյն Արմենակայ յանձնելով՝ ինքը Հարք ա. նուանեալ տեղը կը քաշուի և հօն կը թաղուի: Այսպէս կ'ընեն Արմենակ և Ամասիա: Առ Գը. սենոփոնի. Արշ. Արս. Գ. գլ. Ա. Երուանդ իբրև հրաժարեալ թագաւոր և պարգապէս հայ անուամբ կը յիշուի: Իսկ Տիգրան՝ ընդհակա. ուսին թագաւորանոց և իշխան կը ներկայանայ: Յամենայնի նա է որ Արսիւրի հետ կը խօսի և կը գործէ: Այս սովորութիւնը հաստատուն պա. հեցին ամենայն արշակունի թագաւորք մեր: Մ. Խորեն. Բ. գլ. Ը. գլ. 176-176:

1. Առձեռն Նախ. հա. Բ. գլ. 364:

2. Ուր ըստ ինքեան և թէ հայկեան գաղթա. կանութենէն ևս մասն մի մնացած համարելու ըլլանք, անոնց անյիշատակ ժամանակի հնու. թենէն չափելով, պէտք էին արմենականին հետ նոյն ըլլալ, եթէ իրաւքնէ արմենական կոչուած գաղթականութեան ցեղք մի և նոյն էր ընդ հայ. կեան ցեղին:

թեան նորա: Իսկ մնացած որդիքն, որոնց հետ շատ անգամ նաև հայրն՝ կը գաղթէին այլուր և կը տարածուէին: Այս օրէնքը՝ նոյն իսկ մինչև Արշակունեաց հարստութեան ժամանակ անխախտ պահուած էր, և վաղարշակ լուսն կարգաւորեց:

Այս ոճով միշտ կը յառաջին հայր. կը տարածուին և կը բազմանան. սակայն տարածուելու և բազմանալու ժամանակ միանգամայն և զիրենք մի նախաձոր սերունդ և մի միայն ազգութիւն կազմող կը ճանչնան:

Պէտք չէ զարմանալ անոնց գրեթէ 700 տարուան միջոցին զօրաւոր միապետութիւն մի չկարենալ ձևացնելուն վրայ, որովհետև այն ներքին և ազգային միաւորիչ կապին հետ՝ միասին, կար նաև հասարակաց իրաւունք տոհմից ըստած գեղեցիկ ազատութիւնն, որով իւրաքանչիւր տոհմ՝ իւր նահապետական առաջնորդութեամբ կը վարուէր:

Հայկեան գաղթականութեան առաջին ժառանգութեան բնակիչը, կ'ուզեմ՝ ըսել, Կագմեանը, և արմենական գաղթականութեան վերջին կայուածոց բնակիչն, այսինքն է Սիսականց ցեղը, զինուորական տոհմը կը համարուէին Հայոց աշխարհին: Առաջինքն՝ Ասորեստանեայց և ուրիշ այլաւոր ժողովրդոց արշաւանաց դէմ՝ իբրև սահմանապահ կենալէն և հայկեան գաղթականութեան կայուածները պաշտպանելէն զատ, մեծապէս կ'օգնէին արմենական գաղթականութեանցը. դարձակուելուն և շէննալուն, Եգիպտոցուց և այլոց հարաւային ազգաց քաղաքականութիւնն՝ ի հայաստան փոխելով: Իսկ Սիսականք արեւելեան և հիւսիսային կողմերէն կը պաշտպանէին յետոյ զՀայս:

Հայկէն մինչև ցԱրամ անընդհատ է Հայոց աշխարհակալութիւնն: Գոգ. ցեա 7 դարուց ընթացից մէջ Ասորեստանէն, կամ լաւ ևս ըսելով, Կորդուաց լեռներէն մինչև ցԱրտի և ցԳուգար գաւառներն եղած միջոցը կը գրաւեն:

Բայց աւելի նոյն ուղղութեամբ և հայաստանի կեդրոնն եղած երկիրներն, առանց շատ իսկ խտորեւելու յարեւել և յարեւմտս կոյս, Հայազգի գաղթականութեամբը՝ Բագեանց, Մանաւազեանց, Խոռխոռուեանց և Աքանազեան նախարարութիւնքը բազմամարդութեամբ կը ցնծան: Չկայ գրեթէ գեղեցիկ և արգասաւոր տեղ մը, ուր բնակութիւն և աւաններ չիստած չըլլան: Գաշտավայրն Արարատայ, ստորոտը Մասեայ և Արագածի, վերջին բազուկն Արածանայ, ծովն Գեղամայ, Արմաւիր և Գեղաքունի, տեղիք՝ զորս բնութիւնն բոլոր իւր գեղն և վսեմութիւնը թափեց է և լեռանց գոտիներով ամրացուցած, խստով և ջրով արգասաւորած. բոլոր այս յիշեալ տեղերն, որոնք յառաջ ամայի էին, Հայոց եկաւորութեամբը՝ բնակչոք լեցունցան: Սակայն անոնց նաև մշակութեամբ և քաղաքականապէս ծաղկին, ասկէ վերջն եկող սերնդոց գործը պիտի ըլլայ:

Այսուհետև կովկասեան ձիւնապատ լեռներն և Մոսկան լեռանց չղթայքն հիւսիսէն, յարեւելից կասպից և վրկանայ ծովն, ինչպէս յարեւմտից՝ Սև ծովը՝ սահման և արգելք կ'ուզեն զենել Հայ գաղթականութեանց և անոնց վսեմական ընթացից: Այժմ՝ առանձին ցեղից կամ տոհմական առաջնորդութեամբ անհնար է անդրադոյնս յառաջել: Անհնար է նոյնպէս Հայազգի գաղթականութեան անդրէն զկայ առնուովսն զի այն կողմանքն անոնց գալլաւ տեանը կը սպասեն: Ուստի ուրիշ հնարք մը պէտք է գտնել բնութեան զօրութեանցն յաղթելու համար:

Ահաւասիկ ուշ կամ շուտ գտաւ զայս հայ հանճարն և ճարտարութիւնը վարեալ՝ ի հարկէն: Կը թողուն առաջին անգամ Հայք առանձին կամ նահապետական առաջնորդութիւնն. ամենքը միաձոյլ խորհրդով մէկ զինուորական զօրութեան կամ միապետական գաւազանի ներքև կը փութան միաբանիլ: Ստուգիւ, այս հզօր զօրութիւնն և պե-

տական գաւազանն՝ անձնաւորուած է՝ ի քաջարին Արամ: Սա եղաւ, ըստ մարիքասեանն՝ աւանդութեան, իբրեւ « աշխատասէր, հայրենասէր և քաջ թագաւոր », որ բոլոր տոհմական զօրութիւններն ի մի ձուլելով՝ կազմեց հինգ բիւր զօրաւորաց: Արամ ոչ միայն կը փութայ յազատութիւն սահմանացն Հայաստանի աշխարհ և աւերող բռնաւորներու: ² ձեռքէն, որոնք յետոյ ժամանակաւ գաղթելով, կ'արգիւիին Հայոց ընթացքն և կ'ապականէին անոնց բնակութիւնը, այլ նոյն ինքն աշխարհակալութեամբ ընդարձակել կը ջանայ Հայաստանի սահմաններն հիւսիսային և արեւմտեան կողմերէն:

Երբեք այսպիսի նորակազմվարչութեամբ՝ հայ ազգը բոլորովին նոր կերպարանք կ'առնու: Այսուհետեւ այն աշխարհի զօրութիւնը գոգցես ի զինուորական զօրութեան աւելի կը կեդրոնանայ: Ժամանակ մի Հայք իրենց ներքին բարենորոգմանց կը զբաղին և զնաւական զօրութիւնն ևս կը ջանան յառաջեցնել: Իբրեւ անմիջական արգիւնք իրենց այդ ներքին կեդրոնացման է, որ յանկարծակի և անարգել ընդ ծով և ընդ ցամաք տարածուած կը գտնենք զՀայս Արամայ ժամանակ:

Յարեւից կը հասնին մինչև ցԶարասպ ³ լեռուն և իսպաից ծովուն եզերքը: Հիւսիսէն կը տիրեն Վրաստանի և ծագումն կու տան Աղուանից ⁴, Խաբուեաց ⁵, Սկիւթացւոց ⁶, Ալա-

նաց, Սախաց և այլոց հիւսիսարեւմտեւ գաց: Հարաւէն կը տիրեն Կորդուաց, Մոկաց, Պարսկահայոց ընակած երկիրներուն և կը հասնին մինչև Առքեստանի դաշտավայրը և մինչև ցԱփրիկէ ¹: Սակայն Հայոց այս ժամանակի արշաւանաց կամ գաղթականութեան ամենէն նշանաւորն եղաւ յարեւմուտս, որով Հայք զրաւեցին զփոքրն Ասիա: Թերեւս իշլաղայի կղզիքն անգամ հայ ժողովրդեան ծանօթացան:

Իրենց զինուորական զօրութիւնը ձեռք բերած ժամանակն անգամ, զհին ոճը բնաւ ձեռքէ չի թողուցին Հայք: Արամ, նախնոյն իւրոյ Հայկայ նման ուղեւոր յիւր նախկին ժառանգութիւնը վերադառնալ, Մշակ ² անուամբ կողմնակալ մը կը թողու հօն 10,000 զօրքով: Հօն ուրիշ քաղաքաց հետ՝ Մաժակ (Մշակ) քաղաքը ևս կը շինէ. որ յետոյ ընդարձակուելով յայլոց՝ Կեսարիա ³ կոչուեցաւ: Բաց աստի, եթէ ուղեւորու ըլլանք մարիքասեան աւանդածին, Հայք մեր թուականէն յառաջ ժԳ, ժԲ և ժԱ դարուց մէջ բոլոր այս նոր գրաւած անքնակ երկիրներն ևս բնակեցը լեցուցին: Հայաստան և անոր սահմանակից հիւսիսակողմանքը՝ այս նուհետև եգիպտացւոց, Բալտորիացւոց և Ասորեստանեայց ուշադրութիւնն սկսան գրաւել: Արդարև Հայկազունեաց թագաւորութեան այս չրջանին մէջ կը սկսին եգիպտոսի 18 և 19 հարստութեանց փարաւոններուն յարաբերութիւնքն ընդ Հայոց: Անգին

տպագր. Վէսէլինկայ: Հերոդ. Ա. գլ. ԺԱ: Պլինիոս 2. 17: Կալմէժ Մըն. Բ. 13:

1. Սալուստիոս 18. Պատերազմ Յուգուրթայ:

2. Եթէ ըստ բառական նշանակութեան առնելու ըլլանք և եթէ ըստ նպատակի հայազգի գաղթականութեան, Մշակ ուղեւոր առանձին նահապետի մը յատուկ անուն է. այլ երկրագործական ընկերութեան և կամ վաստակաւորաց ընդհանուր անուն մը, զորս Արամ հաստատեց Կեսարիոյ կողմի երկիրները մշակելու համար:

3. Այսինքն Մ. Խորենացի, այլ նոյն իսկ Հայաստանի կենդանի աւանդութիւնն, որ մինչև մեր թուականին Գ. դարը կը անէր գեւ կը վը կայէն: Փաւստոս Բուզանդացւոյ Ե. Դպր. 13:

1. Մ. Խորենացի Ա. գլ. ԺԳ:

2. Ներքոր ոմն՝ Մարգես անուանեալ, որ Մէդացւոց կամ Մարաց կ'առաջնորդէր: Բարձրագէ ազգաւ Ասորի, և Պայասիրս Բաղդան: Վերջնոյն համար կ'ըսէ պատմութիւնը (Մ. Խոր. Ա. գլ. ԺԳ) թէ Պոնտոսի և Ուկրանու (Միջերկրականի) մէջ հինահարութիւն կ'ընէր:

3. Մ. Խորենացի Ա. գլ. ԺԳ: Սարաբոն, Ստեփանոս և Պլինիոս 2. 16:

4. Մարիքասեան պատմութիւնը՝ Սիսակէն յառաջ եկած կը համարի. (Մ. Խորենացի Ա. գլ. ԺԳ. գլ. Ը):

5. Քսենոփոն և Պլինիոս՝ Արմենոցայլիք կը կոչեն զնոսա:

6. Դիոդոր Սիկ. հտ. Ա. ԹգժԳ. 155 ըստ

արժէք ունին մարիբասեան կամ Մ. Խորենացոյ ճոխ աւանդութիւնը Արամայ ժամանակի Հայոց մասին . մանաւանդ զժողովուրդիս վերադասելու վասն զի գրեթէ արդի հնութեանց հմուտ բանասէրք առ հասարակ՝ կը հաստատեն թէ Ժ, Թ. և Ը դարուց մէջ սկսան Ասորեստանցիք զորանալ՝ երբ եգիպտական զօրութիւնը բոլորովին տկարացաւ :

Արայ Գեղեցիկին մահուանէն մինչև ցՊարոյր (1655) տոհմային պատմութեան աւանդածն՝ Հայոց ներքին և արտաքին կացութեան մասին՝ ոչինչ է . մանաւանդ թէ Ասորեստանեայց լծոյն տակ նուաճած կը համարի զՀայաստան և անոնց կողմանէ դուռած հայապատուաստ բազմաթիւ իշխանաց պարզ յիշատակութեամբը կ'անցնի :

Սակայն եթէ արտաքին մատենագրաց՝ Հերոդոտոսի, Դիոդոր Սիկիլիացոյ, և այլոց աստ անդ ծագած լուսոյ կայծերն միացընենք, մանաւանդ Ասորեստանեայց և վանայ սեպածե արձաւ նազրութիւնք և անոնց վրայ ըրած արդի արեւելագիտաց Ռալֆինսոնի, Լընորմանի, Մասթրոյի, Պոդդայի և ֆ. Շմիթի քննութիւնքն ՚ի մի կենդրոնացընենք, այն ատեն ստուգել երեան կու գայ մեզի Հայոց և Հայաստանի այն ժամանակի քաղաքականութեան և զի նուորական դիմաց լուսանկարն :

Հայոց վերաբերութիւնը 1500էն մինչև ցԺԱ դար՝ աւելի եգիպտացոց հետէր քան թէ Ասորեստանեայց : Կարճեցեալ Շամիրամի Կոնսեայ և Դիոդորի, ինչպէս և Նիհոսն, որոնց մեծամեծ ձեռնարկութիւնք կը պատմուին 1300 ՚ի Հայս, և Հայաստան անոնցմէ նուաճուած կը համարին, այս ամենն այլ ընդ այլոյ քաղաքական ժողովրդոց աւանդութիւնք են : Արդի քննութիւնը զնինսուն և զՇամիրամ իրօք պատմա-

կան անձն չընդունիր ¹ և ոչ իսկ անոնց հնութիւնը : Այլ լոկ դիցարանաւ կան անուանք կամ նախապատմական ժամանակներ կը համարի :

Ուրեմն Ասորեստանեայց զինուորական ձեռնարկքը, յ900 կամ ՚ի 1000 կը սկսին Հայաստանի մէջ, Թագղաթփաղասարի Ա ձեռքով :

Եթէ դարուս հնագիտաց քննադատութիւնքը՝ ենթադրական միայն ըլլային, իրացընէ այնքան ուշադրութեան արժանի չէին համարուիր . սակայն երբ կը տեսնենք ամենահին ժամանակաց յիշատակարանաց անժխտելի հաւաստիքն ևս, այնուհետև ստիպուած ենք տեսութիւննիս անդրազոյնս քան զժամանակ զօրանալոյ Ասորեստանեայց պետութեան ձգել, և Հայաստանի թէ քաղաքական թէ զինուորական և թէ վաճառականական վերաբերութիւնն ընդ եգիպտացոց խուզարկել :

Փիլ. Շմիթ ² մեր աշխարհի վրայ խօսելով կ'ըսէ՝ թէ այն ընդարձակ և բարձրագիւր աշխարհը, որ Միջագետաց հովիտներէն բարձրանալով՝ կը հասնի մինչև Կովկասու գոտիները, Արմենիա կը կոչուէր այն ժամանակէն (1500) ՚ի վեր յորում 18 և 19 հարստութեան փարաւոններն Ռեմեմիւնը յունեն կամ Արմեմիւնը յունեն հետ կը պատերազմէին : Բայց վերջը կը յաւելու՝ թէ այն երկրին մէջ զեռ աւելի հնագոյն անուանց հետք կը տեսնուին, որուն տեղացիք և հնաւանդ զորոյցք՝ Հայաստան անունը կու տան, զոր Հայկայ առաջնորդութեամբ Բաբելոնէն եկած

1. Սակայն ասով ոչ Դիոդորի, ոչ Կոնսեայ և ոչ Մարիբասայ կամ Մ. Խորենացոյ աւանդածն չենք աչտք են համարուել, վասն զի ազգայն և ժողովրդական աւանդութիւնք են : Ինչպէս այս հեղինակներն ալ անոնց հաւատարիմ աւանդապահքն են :

2. Հին պատմ. արեւ. Աղգ. Գ. 42. ԽԻ. էջ 566 :

3. Վասն զի կ'ըսէ Ռեմեմիւնը զինոյն մէջ, թէ եգիպտական յիշատակարանք կը ջուլցընէ մեզի զԻոգմէս Գ. որ 1500-1300 տիրելով Միջագետաց Ռեմեմիւնը յետոյ Ռեմեմիւնը յետոյ կ'երթայ, մտնելով անոնց լեռնաց մէջ :

զինուան մէջ, Պապդեսպան զրկելով առ կայսրն Յունաց, կը պահանջէր, թէ « Կեսարիա հետ և տասն քաղաք մեր լեալ է (առ Արամաւ), արգ ՚ի բաց ատուր, ապա թէ ոչ կուրիք » :

գաղթականութիւնը բարդաւածեցոյց։ Սակայն երբ եղիպտական զօրութիւնն՝ տեղի տուաւ առորեստանոյն, այն ժաւանակը կ'երեւի թէ առաջին անգամ նուաճուած ըլլալ Հայաստան 'ի Նիւնիբայ-Նիբայէն։

Տակիտոս կը պատմէ՝ թէ Գերմաւնիկոս, Թերէի աւերակաց այց ելած աւտեն, ամենահին արձանագրութիւններ տեսաւ, զորս քրմի մը թարգմանել տուաւ, որ կ'ըսէր, թէ Թերայիք ժամանակաւ 70 քիւր զօրք ունէր. և թէ եղիպտացիք հարկատու ըրած էին երբեմն զԱսորեստանցիս, զՊարսիկս, զՄարս, զԼիբէպիս, զԵթովպացիս, զԲակտրիացիս, զՍկիւթացիս և զՀայս։

Այսմ համադուած ենք թէ եղիպտացւոց պէս մեծազօր պետութիւնն զՀայս ևս նուաճած է։ Բայց թէ Հայք նուաճուած մնացին մինչև զգորանալ Ասորեստանեայց, այս գոգցես անհաւատալի է ըստ այլևայլ զիտոց։ Նախ այն կրկին աշխարհաց իրարմէ ունեցած անբաւ հեռաւորութեանը պատճառաւ։ Բ. Հայք լեռնականք ըլլալով՝ չէին կրնար իրենց անմատոյց ամրութեանցը մէջ միշտ նուաճեալ մնալ։ Գ. Այն ժամանակն, յորում կը կարծուի թէ եղիպտական տիրապետութիւնը վերցաւ և Ասորեստանեայցը սկսաւ, անդէն և անդ կը տեսնուին Նայիրի վանայ (Մաննայի), Մուսասիրի (Մշոյ), Միդտիսի (Կարնոյ), Միլիտի և Ուրարտի կամ Արարադայ հզօր թագաւորները¹, զորս կ'ընծայեն այսօր Սարկոնի և վանայ սեպագէ արձանագրութիւնքը։ Դարձեալ բաց յԱրմաւրայ, յԱշտիշատէ, յերիզայ և յԱմրոյն Աւոյ, կը յիշուին ուրիշ անառիկ և բազմաթիւ բերդաքաղաքներ² և աննուանելի զօրաց բանակներ։ Միով բանիւ

քաղաքականութիւնում և զինուորական զօրութեամբ բարդաւած նախարարութիւնք, զորս կազմեանք, Բաղդանք, Մանաւազեանք, Արմենակեանք և այլք ընծայած էին յընթացայ այնչափ պարուց։

Հայկազունեաց կամ Արարատայ թագաւորութիւնն՝ զոր դարը բազումք և բնութիւնն երկրին հաստատեալ տնտեսական, ոչ միայն եգիպտացւոց, այլ նոյն իսկ Ասորեստանեայց պէս պատերազմական պետութեան ներքէն և չէր կրնար այնուհետև խոնարհիլ. և թէ թոնարհեցաւ երբեմն երբեմն, աւայն ոչ բնաւ իսպառ ընկճուած մնաց, ինչպէս կը կարծուէր մինչև այս վերջին ժամանակներս։

Անգին են և ճոխ՝ արտաքին յիշատակարանաց մեր աշխարհիս մասին աւտեղած այս ժամանակի պատմութիւնքը. սակայն ամեն բանէն աւելի արեան հեղինքերով ծածկուած կը տեսնուին անոր դաշտերը։ Թակղաթիսիադասար Աէն, կ'ուզեմ ըսել 1130էն (եթէ ստոյգէ՝ արդի բանասիրաց ընթերցումը) սկսեալ մինչև դամ 714 զԱրկոն վերջին թագաւոր, բոլոր Ասորեստանի թագաւորք մեծամեծ բանակներով անընդհատ կ'արշաւեն Արարատայ դաշտացը վրայ. սակայն չեն կրնար իսպառ զԱզատն Մասիս իւր բարձրութենէն խոնարհեցնել. Ըստ վկայութեան Մասրեայի, Օբերդի և այլոց արեւելագիտաց, մի և նոյն պատերազմներով և մի և նոյն ժամանակները ինկան կործանեցան եգիպտոսի և Ալամայ թագաւորութիւնքը, որոնք ամենէն հզօրագոյնքն էին։ Բայց Հայաստան մնաց աննկուն։ Վերջապէս յուսահատեցաւ Սարկոն, և այնուհետև իւր գէնքն և զօրութիւնը Մարաց վրայ գարծուց։

Արճիստիս՝ որդին Ուրասիի՝ մնաց կանգուն և բարդաւած, յետ տեսանեւ

1. Պեշտուրիս, Լուտիպի, Իլպուինա, Սարատ, Մինուաս (Մանաւազ), Ուրաս (Հրաշէ), Իրանգու, Միդգա, Ագա, Ուլլուսու, Մակաւագի, Ուրգանա, Արճիստիս (Կոռնի)՝ ըստ Լենորմանի և Սատուրի։

2. Սանաթուշ, Տուրուքա, Իլդիգի, Իլդիպիս, Արմիգ (որ անշուշտ Մ. Խորենացւոյ Արտիմէք քաղաքն է) և գէն օւրիշ շատ պարսպաւոր քաղաքներ, որոնց համար Սարկոն կ'ըսէ թէ և անմատոյց էին որոց 22ը, զորս Ուրարդայ (Արարատայ) թագաւորն Ուրաս՝ Ուլլուսունէն առաւ էր՝ Ասորեստանի հետ կ'ըսէ միացուցի։

լոյ զիրօժանումն երկուց թագաւորու-
թեանց . մանաւանդ թէ միացոյց բո-
լոր Արմենիոյ, Աղձնեաց և Ծօփաց (Նա-
յիրի), վանայ (Մաննայի), Մշոյ (Մու-
սասիրի), և այլ առանձին իշխանու-
թիւններն՝ Արարատայ թագաւորու-
թեան հետ . տեեց մինչև ցանկումն ու-
խերիմ թշնամոյն Հայոց, այսինքն է Ա-
սորեստանեայց պետութեան : Նոյնը
դարձեալ Եգիպտոսի, Պաղեստինու և
Ասորեստանեայց թագաւորաց նման՝
աննման մեծագործութեամբք և ար-
հեստիւք անմահացոյց իւր և իրեն ազգի
յիշատակը՝ Որմիա և Բզնուռնեաց ծով-
ափանցն և անոնց բարձրութեանց վրայ .
Եփրատայ եզերքն և բոլոր Միանթաբի
մակարդակին երեսը . յորս ապա վան և
վահէ վերջին ժառանգքն Հայկազու-
նեաց հարստութեան յաւելին ինչ ինչ :
Ասոնց վրայ երկրորդ գլխոյն մէջ պետի
խօսինք :

ԳԼՈՒԽ Բ.

Մեծագործութիւնք և արուեստք հայ ազ-
գին ժԳ. դարէն ցԳ. դար նախ քան ցԳրիս-
տու . — Նշանատու շրջանք ժամանակի և
դէպք . — Գործնական կեանք Հայոց և
անոնց մեծամեծ օգուտներն :

Մահկանացութեան և ժամանակին
համայնաժախ ընթացքին հետ անցաւ
գնաց հինաւորոյցն Եգիպտոս : Բայց 'ի
նշան իւր անցեալ մեծութեանն և փա-
ռայ՝ թողոյց իւր ապագայ սերնդոյն
հրաշարուեստ և մեծայաղթ բրգանց,
թեբայիդայ և Մեմփիսի տաճարաց և
Մերովէ լճին մեծագործութիւնքը :

Անցին նոյն օրինակ փենիկեցոյց,
Եթովպացոյց, Պաղեստինացոյց, Աս-
րեստանեայց, Մարաց և Պարսից պե-
տութիւնքը : Բայց ամենքն ալ աւելի
կամ նուազ թողուցին երկրիս խաւե-
րուն մէջ ծածկուած իրենց գիտու-
թեան և արուեստից յիշատակները :
Այսպէս ուրեմն հայ ազգն, որ ա-
նոնց հետ ծնաւ, անոնց հետ սնաւ և
այն զուգընթաց դարուց կամ ժամա-
նակաց զազափարներովն և արուեստգի-

տութեամբքը բարգաւաճեցաւ, հարկ
էր որ անոնց պէս թողուր իւր հանդեր-
ձեալ սերնդոց՝ իւր անցեալ մեծագոր-
ծութեանց յիշատակարանքն և նախ-
նական գիմաց լուսանկարն : Որովհետեւ
բնութեան օրէնք է, թէ նախնիք և
դարք նոցին՝ ծննդեան և կենաց հետ՝
նաև զմտաւորական երկունս իւրեանց
իբրև ժառանգութիւն որդւոց իւրեանց
կը օնփականեն, և որդիք՝ կարող են
դարուց 'ի դարս մշտնջենաւորել գնո-
սին :

Յիւրաւի, աւանդեցին մեզի մեր նախ-
նիքը ժԳ. դարէն 'ի վեր նախ քան
զԳրիստոս, և ո՛վ գիտէ, թերևս անկէ
շատ յառաջ, իրենց պատկառելի յիշա-
տակարաններն աւելի քան զոր կը կար-
ծէինք 30 տարի յառաջ . քանի որ արդի
դիտութեանց յառաջխաղացութիւ-
նը չէր բացած անոնց խորհրդական
քօղը :

Դարձրենք աչքերնիս վասպուրա-
կան աշխարհի մէջ Բզնուռնեաց և Ուր-
միոյ ծովափանցն և բնութեան հրաշա-
լի տեսարաններով կազմակերպեալ
վանայ քարաբլրոյն վրայ . զորս վաե-
մական հանճարն և արուեստգիտու-
թիւնն անցելոյ մարդկութեան, յըն-
թացս բազմահոլով դարուց հետզհետէ
աւելի ևս գեղեցիկացուցած է և զար-
մանալի ըրած :


Անդ՝ ուր հայկեան ըսուած առաջին
գաղթականութեան կամ եղբայրեանց
բնակութեան տեղն եղաւ, Հայաստա-
նի շէնքերէն ամենէն աւելի հնագոյնը
մեզի կը ներկայանայ : Արգարեւ, վա-
նայ քարաբլրոյն անձաւներն՝ որոնց
ինչպէս սկզբնաւորին՝ այսպէս և կա-
տարումը՝ նախապատմական ժամանա-
կի մէջ ծածկուած է : Եւ առհաւատ-
չեայ անոր հնութեան ոչ Դիողորի ¹
Սիկիթիացոյ կամ Կտեսիայ, ոչ Հերոդո-
տոսի և ոչ իսկ Մարիբասայ կամ Մովսի-
սի խորենացոյ ² պատմագրութիւնքն
են : Ասոնք ամենքն այլ ընդ այլոյ կը

1. Պատմ. գլ. ԺԲ.

2. Բ. ԴԷ. ԼԼ. և ԳԻԲԵ ԺԲ. ԴԷ. ԺԸ.

պատմեն, չըսեմ այնչափ ժամանակի
հնութեան, որքան անոր շինողաց
նկատմամբ, Այլ նոյն ինքն այն սոսկա-

լի բերդին յօրինուածոց անօրինակ ոճն
և հօն գտնուող անբաւ՝ բեռնադրոց
նշանաւոր զանազանութիւնք, որոնք



Վանայ ժայռից միոյ կողման տեսիլն:

Ասորեստանեայց և Պարսից, կ'ուզեմ
ըսել, Նինուէի, Բաբելոնի և Խորասպա-
տի սեպաձևներէն աւելի մեծագոյն
հնութեան կնիք կը կրեն յինքեանս:
Շուրջ երեւելի ճանապարհորդին ըրած
նկարագրին նայելով, որ առաջինն

եղաւ Վանայ հնութեանց այցելելու,
ամենէն վսեմն է Ղուրապ ըսուած բար-
ձրութիւնը, որ 1700 մէրը երկայնու-

1. Շուրջ գիտնականին Վանայ կողմերն ըրած
քննութեամբն այնչափ նիւթ սեպաձև գրու-
թեանց ընդօրինակեալ տարածեցաւ յԱւրոպա,

թեամբ և 1 1/2 մղոն չըջանակաւ՝ ուղ-
տաձև օդուն մէջ կը կարկառի . 10
մղոն հեռաւորութեամբ ծովակին կող-
մէն եկաւորաց ռազարութիւնն յինքն
կը գրաւէ . մինչդեռ անոր ստորոտն
եկող նորաչէն քաղաքն մօտէն հագիւ-
կը տեսնուի :

Անոր գագաթն ելլելուն պէս ոչ մի-
այն կապուտակ ծոգի՝ իւր չըջակայ հո-
վիտներով, այլ նոյն իսկ վարագ. լեռն
և Պարսից աշխարհը զննողին աչացն
առջև կուգան : Անդ՝ մէկ կողմանէ հնա-
գոյն աշխարհն՝ իւր մնացորդներովն,
և միւս կողմէն ալ բնութեան տեսա-
րաններն զմարդ ի հիացումն կը յափըշ-
տակեն : Ստիպուած է նա ո՞վ ալ ըլլայ,
զինքը յընկալատող հրաշակերտներէն
զուրպ՝ յանցեալ անոր Հայ ազգին ձգել
իւր տեսութիւնն :

Գերմանացի հնագիտին՝ քարաբլրոյն
ծայրը նկարագրած հնաւանդ շինու-
թիւններէն նշանաւորքն են, Ա. Ներ-
քին գղեակը 100 ոտք բարձրութեամբ :
Բ. Մեծ գաւիթն՝ որուն երկայնութիւնն
է 64 ոտք, Լ. 18, և Բ. 25 : Գ. Մեծ
քարայրը կամ շտեմարանն 70 եր. 15 Լ.
և 8 ոտք բարձր : Դ. Մեռելոց կոյուած
սենեակներն որոնց իւրաքանչիւրին եր.
25, Լ. 21, Բ. 25 : Ե. Նաւթի դբեր (Նաւթ
հոտելուն պատճառաւ) : Զ. Զերեա-
կայեղի մեծութեամբ վիմատաշ նստա-
րաններ՝ 34 ոտք ընդարձակութեամբ :
Է. 25 աստիճան ունեցող բազմաթիւ
ասնդուղներ, որոնց իւրաքանչիւր աս-
տիճանի համար կ'ըսուի թէ 10 ոտք
լայն քարի մէջ փորուած են : Այս ասն-
դուղներն երբեմն կամարաձև և եր-
բեմն ուղղակուոր զոներով բոլոր վե-
րոյիշեալ շէնքերն քաղաքի մը պէս ի-
նարու հետ կը հարորդեն, որոնք լի
են երեք տեսակ բևեռագրովք : Ոմանք
այնքան դարերէ ետքը՝ այնպէս անա-
պական մնացեր են մարմարիոնի պէս

փայլող ծեփերուն վրայ, որ կարծուի
թէ դեռ նոր փորագրուած ըլլան :

Բաց աստի՝ կան նաև այն քարա-
տուր բերդին գագաթէն մինչև անոր
ստորոտը՝ ստորերկրեայ ճամբաներ :
Եւ ասոնք ոչ միայն քաղաքին հետ միա-
ցընելու պատճառաւ շինուած են, այլ
մերձաւոր աղբերաց և գետոց անոյշ
ջրերն մինչև անոր ծայրը հանելու և
հօն բնակող բամբիշներու բուրաստան,
նեքն անշուշտ ոռոգելու նպատակաւ,
որոնք Բաբելոնի առկախեալ պարտի-
զաց նմանութեամբ օդուն մէջ ծածա-
նելով՝ քաղքին վրայ անուշահոտու-
թիւն կը սփռէին և զովութիւն :

Վանայ բերդին ճիշդ գաղափարն
ստանալու համար՝ կ'ուղարկենք զվեր-
ժանողս առ Պ. Պրանդ և առ Շուլց,
որուն յօդուածն հայերէն թարգմանու-
թեամբ իսկ հրատարակուած է Եւրո-
պա Լրագրին 1847 տարւոյն 10, 13,
16 և 19 բերրող թուոց մէջ : Սակայն
գիտցած ըլլան վերժանողք թէ ինչ որ
հայ Հերոդոտոսն յիշ. դար յառաջ իւր
Ա. գրոց ժՉ. գլխուն մէջ նկարած է՝
նոյնը կը նկարագրէ նաև գերմանացի
գիտնականը՝ մանրամասն տեղեկու-
թեամբ : Եւ կարծեմ թէ 40 դար յետոյ
եկող սերունդքն ևս նոյնպէս պիտի
գտնեն այն վսեմական հանճարոյ եր-
կունքն, որ գիտցած է զապականացու
տարբեր անգամ անապական պահել
ընդդէմ հոսանաց բնութեան և բաղ-
դին :

Իսկ մենք անոնց մանրամասն նկա-
րագրութենէն աւելի, որոնք արդէն իսկ
Ժանօթ են բազմաց. անոնց շինողաց
արուեստգիտութեան և զօրութեանը
վրայ պէտք ենք զարմանալ :

Յիշուի, ինչ հնարագիտութեամբ և
միջոցներով յալոցեցան նախնիք այն
կարծր ապառաժին վրայ, որուն հա-
մար կ'ըսեն Մ. Խորենացի և գերմա-
նացի ճանապարհորդն թէ « Եւ ոչ զիծ

որ ըստ Ան Մարգէնի մինչև այն Ժամանակն
ժանուցուած ամէն սեպականերէն աւելի էր :
Իսկ անոնք որ ապառաժին վրայէն ընդօրի-
նակէց՝ միւսներուն նման համառօտ չեն : Մին
աստիպէ 98 տողով 15,000 նշանագիր կը պա-
րուանակէ իսկ. այլք 7, 8 մինչև 12,000 նշանագիր :

1. Անոնց մէջ անձամբ մանելով Շուլց՝ քսան
քալ յառաջ գնաց, բայց աստիկ հովի հոսա-
նաց պատճառաւ յառաջէն անկարելի է կ'ըսէ
նա :

մի երկաթոյ այժմ վերագրել կարելի է » . իսկ անոնք ոչ միայն անհամար բեռագորոց գիծեր վերագրեցին , այլ նոյն իսկ բոլոր այն լեռնացեալ քարաբլուրն « իբրեւ գրչաւ մում հարթելով 'ի ներքոյ և արտաքոյ » , ամբողջ բերդաքաղաք մը հրաշակերտեցին , ընդարձակ զինուորանոցներով , գանձարաններով , գերեզմանատամբ , ամբիթեալ տրոններով և « խորին պատրաստութեամբ » : Արդի գիտութեամբ և արուեստի քյառաջացեալ զարն անգամ զարմանալէն չի գաղբիր , վասն զի գեռ չէ կարողացած անոնց խելք հասցընել : Նոյնը՝ բնաւ իրեն ամօթ չի համարիր՝ զլուխ ծռելով այն պատկառելի հնութեանց առջև : հրատարակել թէ Հինք աւելի հանճարեղք գտնուեցան 'ի շինել , բան այժմեանք 'ի քակել զնոսին :

Ինչպիսի եղած պիտի ըլլան Անահտայ կամ վարդգէսի քաղաքն Արտիմէդ , որ երկու կամ երեք ժամ հեռաւորութեամբ վանայ հարաւակողմը կը գտնուի . և անոր աւերակներն իսկ կը տեսնուին ըստ Վիլպրահամայ և Շիւլայ : Ինչպիսի հրաշալիքներ եղած պիտի ըլլան արդեօք յԱրմիա՞ ծովակը

1. Ըստ վկայութեան Պ. Եւսէքի , Լանկթիմուրէն սկսեալ մինչև ցայսօր այն կողմի կուսակալք միշտ փորձ փորձեր են այն սենեակներէն մին , որուն մէջ կը կարծուի թէ դանձ պահուած է , քակել գործեօք կամ վառօգով , բայց բնաւ չեն յաղթած :

2. Արմիա և կապուտակ լճերն , զորս հաւանօրէն Արձիտախ յիշած է , ուղեւորով Մեդիա տացւոց Մէրիս թագաւորին և Մերովէ լճին զապափարը (Թողուլ . եթէ ըստ Պաղոմոսի (Ն . գլ . ԺԳ) որ Արձիա կը կոչէ զայն , հայկազունի իշխանին անուանեն այնպէս կոչուած համարելու ըլլալը : Այս լճերուն տակէն մինչև ցվան քաղաքն և 'ի Մարաստան կամ յԱսորեստան սկայազորք շամբաներ եղած կը համարին 'ի հնունդ Ռաւլինտն և Ռիգգէր , հնծեղաօրաց համար : Այլ կը հաստատեն թէ նոյն իսկ Լրին երեսն կը տեսնուին այս տեսակ շանապարհաց հեռան : Դարձեալ կը կարծուի թէ այս երկու ծովակներն ոչ միայն իրարու հետ նաւարկելի ըլնանք մ'ուռնին , այլ թէ Միջերկրաւանին հետ ևս հաղորդական են : Վասն զի Ասորեստանեայց բեռագորոց մէջ կ'ըսէ Թակզաթփաղասար Ա . թէ Ասիի ծովէն՝ Նայիի նաւարկեց . զորս բանաւելք առհասարակ Մե-

տանօղ բարձրագոյն անյից վրայի չէն . քերն , անոր հարաւակողման և բոլոր Միանթափի դայտավայրին վրայ եղած քաղաքներն , զորս վերը ծանօթութեանց մէջ յիշատակեցինք : Ինչպիսի եղած պիտի ըլլան հնոյն վանայ կամ Շամիրամակերտին կրկնայարկ , եռայարկ ապարաններն և դիպանուէր տաճարն , արեգակնանման կիտանկարուք և արքայաճեմ փողոցներովն վեհապանծք , որոնք մինչև ցկէս Դ դարու կանգուն կային ըստ վկայութեան փաւստոսի ' Բուզանդացոյ : Բայց Պարսից աւերիչ ձեռքը՝ Շապհոյ հրամանաւ յանդգնեցաւ գրեթէ հիմնալատակ կործանել զայն : Ուրիշ բան չենք կրնար ըսել բայց միայն գոչել ընդ Մ . Խորենացոյ , թէ « Սղաւ ամենայն թագաւորականաց գործոց , որպէս լուսք , առաջին և վեհագոյն համարեալ » :

Վեհագոյն էր արդարեւ այս քաղաքիս համբան՝ ևս և առ հինա : Աւանդութիւնք Ասորեստանեայց՝ Կտեսայ և Դիոգորի հետ զնա միայն արժանաւոր գործ և քնակութիւն կը համարին Շամիրամայ : Անոր մեծութեանը վրայ զարմանք չէ թէ սքանչացած ըլլան նոյնպէս Բաբելոն մայրն քաղաքաց և Մեմփիս հանդերձ Թեբայիդաւ : Բարձր 'ի գլուխ կը պանծայր Եգիպտոս երբեմն իւր բարձրաբերձ բուրգերով , այսպէս նաև հոս բնակող ժողովուրդը կարող էր կրկնել և երեկներ իւր պարծանքը . վասն զի 1700 մէդր սեպագեալ և վիմատաշ հիման վրայ՝ երեք բրդունք կը վերամբառնան , 300 ոտք բարձրութեամբ՝ հանդերձ բազմապատիկ բնակարաններով , ըստ վկայութեան Եուլցի :

Այս բերդիս՝ ամենայն թագաւորական գործերէն վեհագոյն ըլլալուն մէկ պատճառն ալ անոր աննման յորինուածութենէն աւելի՝ է նոյն ինքն չինողաց բարձրագոյն նպատակն : Ար-

ջերկրականէն 'ի վան կը հասկընան : Փ . Շմիթ Բ . գլ . ԺԱ .

1 . Դպր . Դ . գլ . ԾԷ :

դարև, այն բարձրագույն դրից վրայ ամ-
րակառույց գլեհակն, անյիշատակ ժա-
մանակաց մինչև ցայսօր՝ անդր բնակող
ժողովրդաց մի միայն հիւրընկալ և տեղի
ապականութեան եղած¹ է, բռնաու-
րաց մարդախոշոշ սրոյն և հրոյն ձեռքէն
ազատելով. և այնպէս պիտի ըլլայ,
քանի որ գտնուելու ըլլան անդ հետք
մարդկութեան:

Արդ այսպիսի անմասն և ամենահին
մեծագործութիւններ տեսնելէն յե-
տոյ, թող չի զարմանան ընթերցողը
եթէ հարկայ թէ որոն և ինչ ժա-
մանակի կը վերաբերին անոնք. ինչպէս
Գանովայի, Միքէլանճէլոյի, Ռափայելի
և Դիցիանոսի գործերն առաջին ան-
գամ տեսած ժամանակ կը հարցընենք:

Արդի քննադատութեան վրայ հիմ-
նեալ կը պատասխանենք. թէ հայ
հանճարոյն և երկանցն արգասիք են ա-
նոնք և ոչ թէ Ասորեստանեայց. Հըր-
աշայ (Ուրաս) և Կոռնակ (Ուրհիստիս),
այս երկու հայկազունի իշխանքը, ու-
րոնց անուանքը միայն կ'աւանդեն մե-
զի տոհմային աւանդութիւնը, անոնք
բոտ մեծի մասին գործեցին այդ բնու-
թեան հրաշալիքն՝ մարդկային արուես-
տէ անցնելով, որոնք թերևս ի բնէ կա-
յին և կազմեանց² բնակութիւն ե-
ղած էին իսխնաբար:

Սակայն մենք կը լռենք և կը թու-
զուիք որ բազմահմուտն Ռալինսոն³
խօսի իւր հզօր ազդեցութեամբն. « Ար-
մենիոյ հարուստիւն-արեւելեան մասին
եղող երկիրն, այսինքն է վան, որ կ'իյ-
նայ Հայոց և Զակրոսի լեռանց մէջ,
հարաւէն շրջապատեալ ըլլալով նպատ

լեռանց շղթաներով, և մնացած կողմե-
րէն ալ ուրիշ գոտիներով, բնական միջ-
նաբերդ կը կազմէ: Աստ և միայն⁴
աստ քան յայլ ամենայն կողմանս Հա-
յաստանի կը գտնուին հետք մեծա-
գոյն և բարեկարգ պետութեան մը, ի
յուսկնդակ ընթացքս Ասորեստանեայց
և Մարաց թագաւորութեան: Արձանա-
գրութիւնը վանայ կը ներկայացընեն
մեզի ցիդ ինչ թագաւորաց, որոնք կը
տիրէին արեւելեան Արմենիոյ, այսինքն՝
բուն Արուստոսայ, և թէ քաղաքականու-
թեամբ և զինուորական զօրութեամբ
կը գերազանցէին քան զայլ ամենայն
իշխանս Հայաստանի: Թագաւորը վա-
նայ երբեմն ահաւորագոյն թշնամի ե-
ղան Մարաց: Սրգարև, թողուցին ա-
նոնք իրենց տիրապետութեան հետքը
ոչ միայն յանցս բարձրագոյն լեռանց,
որոնք կը հանեն ի բերան Ուրմայ լճին,
այլ նոյն իսկ Միանթափի խոնարհա-
գոյն մակարդակին երեսն և այն Ու-
վակին հարաւային սփանցը վրայ: Ուս-
տի շատ հաւանական է թէ այս հարջս-
տութեան թագաւորներն տիրած ըլ-
լան ես և մեծի մասին Ասորպատա-
կանի⁵:

Ստուգել ալ անժխտելի ճշմարտու-
թեան իբրև հաւաստիք են Ա. այն աւր-
մենիական կոչուած բնեւագրոց տար-
բերութիւնն⁶: Բ. ոչ միայն վերա-

1. Եթէ հոս միայն կը գտնուին ըսելով հե-
ղեակը նոյն իսկ անցելոյն մէջ այնպէս եղած կը
համար, կը սխալի. վասն զի Տրոյիոյ, Նինուէի
և Բաբելոնի հետքերն ալ մինչև այս վերջի տա-
րիները չէին երևնար. քայց աստի չէինք կա-
րող յառաջ բերել թէ ուրեմն ասանք իդիւ-
նի. և Ասորեստանեայց հզօր տէրութիւնքն ե-
ղած չեն: Այսպէս ալ ուրեմն Հայաստանի ու-
րիշ կողմերուն համար կ'ըսենք. երբ փորուե-
ցան հնայն Արմաւրի, Աշտիշատայ, Նախիջա-
նայ, Արտաշատու, Վաղարշապատի, Մեղքն և
Թիւ քաղաքաց բուն անդին և աւերակներն և
հայ թագաւորութեան հետքերը չի գտնուեցան
նոյնպէս այս կողմերն:


2. Լեռնման կ'ըսէ թէ վանայ արևմտեան բեւե-
ւագրերն, զորս Հայք Ասորեստանեայց առին
Պելիստարիս Ա. ժամանակ, բոտ մեծի մա-
սին քաղաքաւորաց նշաններ են. այսինքն այնպիսի
նշաններ, զորս ամեն ազգ կրնայ իւր լեզուով
նա անոր փութաց Արաքսէն առ Սուրբ Գրիգոր
3. Հինգ Պետութիւնք:

1. Ըստ վկայութեան Եռլզի անոր քարա-
փոր որմերուն և սենեկաց մէջ կը տեսնուին
բայ՝ ի հեթանոս բնակութեան նշաններէն՝ նաև
խաչի և քրիստոնէական ուրիշ նշաններ:

2. Որովհետև Ա. նահապետը և նախին ժո-
ղովուրդը գաղթած ժամանակ միշտ ի բնէ ա-
մրացեալ և ջրորբի տեղեր կ'ընտրէին՝ յերե-
սաց արհաւիրաց բնութեան: Բ. Մարիբատեան
աւանգութիւնը կ'ըսէ թէ կազմուս՝ Արմենիոյ
հարաւային սահմանածայրը կը բնակէին, և երբ
Բեյ ի Բաբելոնէ ի Հայաստանը գաղթեցին, ի
նա անոր փութաց Արաքսէն առ Սուրբ Գրիգոր

3. Հինգ Պետութիւնք:

ՊԵՐԱ Դ.



գայն յիշեալ երկու իշխանաց, այլ նոյն իսկ անոնց նախընթաց և յաջորդող իշխանաց անուանին և անոնց մանրամասն պատմութիւնը, զորս կը կարգան բանասէրը առհասարակ : Սակայն յետոյ առասպելը ռամկին՝ Շամիրամայ ընծայեցին զանոնք իբրև անսկզպան ¹ զօրութեան իմիջ, ըստ սովորութեան ժամանակին :

Ո՛ր թողունք ապա Արարատոյ թագաւորութեան մեծագործութիւնը, զոր մարգարէից գրեցին աւելի բարգաւաճ կը ցուցնէին քան զայլ թագաւորութիւնս Արմենիոյ : Ո՛ր թողունք Երասխայ, Եփրատայ և Տիգրիսի գետափանցը վրայ հիմնեալ հինաւուրց քաղաքաց հրաշարուեստ շինուածքն, զորս կը նկարագրեն Քանոփոն, Ստրաբոն, Բուզանդ և Մ. Խորենացի : Որոնք յետոյ երկրորդ շրջանի կամ Արշակունի հարստութեան ժամանակ կրկին փայլ առին :

Միջագետք Հայոց, այսինքն Ադիաբենաց այն մասը՝ յորում՝ Հայք ՚ի սկզբբանէ մինչև քրիստոնէական թուակաշին Ս. Գարե, շինեցին Թամիսակունի, Զեկմազայի, և Տիգրանակերտի աշտարակներն և հոյակապ կամուրջներն, որոնց վրայ, կ'ըսէ Ստրաբոն ², կը փայլէին գոյոյիական սքանչելի ճարտարապետութիւնը : Անով վարուեցաւ Միլին Տիգրանի՝ գործ այլոց ևս քաղաքաց :

Նշաններն : Մինչդեռ Ասորեստանեայց և Բաբելոնացի բնակիչներէն փոխ առնող տրիական ազգերը, ձայնի նշաններ, այսինքն է տառեր փայն առին և կը գրէին առանց գաղափարի :

1. Ստրաբոն կ'աւանդէ թէ Եփրատոյ ափանց վրայ եղած ամուսնի երևելի մեծագործութիւնք Շամիրամայ ընծայուած են : Եւ աւսոր բուն պատճառն է ըստ արդի քննադատոյ, վասն զի Շամիրամ, ըստ Քաղզէացոց՝ Միւրգա կամ Արաբոց, ըստ Յունաց՝ Արեփոս և ըստ Հայոց՝ Ասանիո, քուշեան և քաման ազգերէն պաշտուած արեւելեան հնադոյն յաստուածութիւնն էր որուն խոնարհութեան ձեռքով իբրև ծննդականութիւն յաւաք բերող զօրութեան, կը նուիրէին ամենայն ջրարբի և վսեմական սեղերն և շինութիւնները :

2. Ժ. Գ. Գիբե էջ 1081-2-3 :

Ուրեմն այս ամենայն ակն յայտնի կը ցուցնեն թէ քուշեան ցեղերէն Սսիոյ հիւսիսակողմերը գաղթող ժողովրդոց ամենէն աւելի Հայոց մէջ ծագած էին ՚ի հնումն երկաթագործութեան, ճարտարապետութեան, քանդակագործութեան և հիւսնութեան արուեստը :

Եթէ եգիպտական յիշատակարանք ևս պահասէին այժմիկ, հայ ազգին անթիւ մեծագործութեանց այս դոյզն մնացորդն իսկ շատ էին երաշխաւորել, թէ Արեւստա լճին շրջակայ գաւառացը մէջ և Արարատ բնակող հնադոյն ազգն՝ երբեմն Եգիպտոսի պէս ամենածաղկեալ աշխարհի հետ սերտ յարաբերութիւններ ունեցեր է : Մանաւանդ թէ հայ ազգն իւր և Հայաստանի այսչափ մեծագործութիւններէն յառաջ Եգիպտոսի բուրգերուն Մէրովէ լճին և ուրիշ յօրինուածութեանց վրայ անմահացոյց բոլոր իւր հանճարոյն և վաստակասիրութեան երկունքը :

Հերոդոտոս ¹ Եգիպտոսի քրմաց աւանդութեան վրայ հաստատուած կ'ըսէ, թէ Սեսոստրիս (Ռամսէս Գ.) և Մէրիս ՚ի Հայաստան և ՚ի Կողքիս ըրած արշաւանքէն Եգիպտոս վերադառնալով՝ այն ժողովուրդը, զորս նուաճած երկիրներէն գերի վարած էին՝ Հեփեստեայ կամ Վուլքանի (Հրաբլիի) տաճարին շինութեանը գործածեցին, որոնց հետք դեռ ևս կը տեսնուին : Նոյնը կը վկայէ թէ այն ժողովուրդը պեղեցին բոլոր Եգիպտոսի կամ Նեղոսի հովտին փոսերն և թումբեր կառուցին, որոնցմով Եգիպտոս ոչ միայն ազատեցաւ այնուհետև ՚ի վտանգաց, այլ անբաւ օգուտներ ևս քաղեց :

Աստիղիոս Պոնոնիայցի ² կ'ըսէ, թէ Եգիպտոսի շատ որմնաքանդակները մինչև ցայսօր՝ կ'ընծայեն մեղի զհայազգի քանդակագործս, որոնք մտադիր կը վաստակին ՚ի շինութիւն մեծագործութեանց Թութմէսի Գ. Ամե.

1. Գիբե Բ. Գ. Ժ. 2 :

2. Հայաստան Հաւաք. էջ 334 :

նովբիսի Բ. Սեթուսի Ա. և անոնց յաջորդացը՝

Հայկազունեաց Պարբերութեան մէջ բաց յարուեստական մեծագործութեանց, հայ ազգը մեծամեծ գեր իաւրացնաւ, ի զինուորական ասպարիզի։ Հայք ըստ վկայութեան Դիողորի¹ Սիկիլիացոյ և Մարիբասայ², Արամայ առաջնորդութեամբ, որ էր ժամանակակից և համազոյգ բախտին յինոսի, կ'ազատեն Հայաստանի սահմանակից ազգերը ի ծովային և ցամաքային ասպատակաց։ Արմենոսի առաջնորդութեամբն՝ ի Կողբիս կը շահատակին։ Հայք կարեկից թշուառութեան ծեղունւոյն Պրիամու, 10,000 բանակաւ կ'ընթանան³ յՈղիոն՝ ընդ զօրուն Ասորեստանեայց անոր աղետալի թաւերացը վրայ իրենց մարդասիրական դերը խաղալու։ Հայք ի լուր մարգարէագոյ⁴ ձայնի, զոր միաբան կը հաստատեն Դիողոր⁵, Հերոդոտոս⁶ և Յուստինոս⁷, կը դիմեն ընդ զօրավարութեամբ Պարոյրի ի վերայ Բաբելոնի՝ ընդ Մարաց և Պարսից, ոչ միայն Աստուծոյ ժողովրդեան, այլ նաև իրենց աշխարհի հարստահարութեանց վրէժն տունելու համար։ Հայք մեր թուակաւնէն 6 դար յառաջ, իբրև դաշնակիցք Մեծին Կիւրոսի՝ Երուանդեան Տիգրանայ⁸ առաջնորդութեամբ կը կործանեն Մարաց թագաւորութիւնն և Ափղանակայ պէս խուժաղուժ բռնաւորին ձեռքէն կ'ազատեն ընկճեալ ժողովուրդները։ Հայք միով բանիւ, վաճէի⁹ հրամանատարութեամբ կ'ընթանան 40,000 հետեւակաւք և 7000 այրուծիւք ընդ Դարեհի, նախ այս

վսեմախոհ թագաւորին արդար իրաւունքը պայտապանելու վախճանաւ։ Բիրենց պայտապանութիւնն ապահովցընելու համար, որ 2020 տարի՝ աւելի ազատ քան հարկատու տեւիլն վերջը՝ ըստ Ռաւլինսոնի¹, մերձ էր յանկուճիկը տեսնելիք դանոնք դարձեալ և ընդ զօրաց Գաբըսէսի։

Հայկազունեաց վերջին թագաւորին մահուամբ, առ ժամանակ մը մեռաւ հայ ազգին զինուորական զօրութիւնն և Հայաստան յեւելեանց բռնակալութեան զոհ եղաւ։ Բայց ոչ թէ մեռաւ ի մահ, այլ առ ի յառնել վերստին զօրութեամբ և փառք։ Սակայն անով Հայաստանի ներքին զօրութիւնն և զօրծնական կեանքը կարծես թէ այնուհետեւ աւելի եւս կեդրոնանալով իւր հողի վրայ, շարունակեց մարդկութեան համար ամենօգտակար արուեստն։ Կուզեմ ըսել զերկրագործութիւնն և անով իւր թշնամեացը դէմ իսկ բիւր բարերարութեանց յալթական կոթողներ կանգնեց, մինչև գտաւ դարձեալ իւր սեփական վարչութիւնը Պարթեւ Արշակունի հարստութեան թագին և գաւազանին ներքեւ։

ԳԼՈՒԽ Գ.

Նախանջ քիչոյն Յունաց. — Մուտք ի Հայաստան. — Մարդասիրութիւն Հայոց. — Հայաստանի մշակութեան և անյետրութեան ոսկեդարերն. — Հայ ազգին ազդեցութիւնն իւր սահմանակից՝ մանաւանդ հիւսիսային ազգաց վրայ։

Աղբըսանդրի աշխարհակալութեանէն մէկ դար յառաջ, երբ Յոյիք կը խորհէին Ասիոյ բազմամարդ աշխարհին հետ նաև Հայոց աւերակացը վրայ կանգնել իրենց աշխարհակալութեան արիւնահեղ զրօշը, նոյն ժամանակ Հայք կը պատրաստէին ընդհակառակն Յու-

1. Գերբ Բ. ԿԼ. Ա.
2. Մ. Խորենացի Ա. ԿԼ. ԺԳ. էջ 69.
3. Մ. Խոր. Ա. ԿԼ. ԺԺ. Մագիստրոս, Վարդան, Յով. Կիշ. և Սամուէլ։
4. Երեմիա ԿԼ. ՄԱ 27.
5. Գերբ Բ. ԿԼ. Է.
6. Գերբ Ա. ԿԼ. ԴԷ.
7. Գերբ Ա. ԿԼ. Գ.
8. Քսեն. Արշ. Կիւր. Ա. հա. Գ. ԿԼ. Ա. և Բ. ԿԼ. Գ. — Դ. Մովսէս. Խոր. Ա. ԿԼ. ԻԲ.
9. Կատեսիս Ա. Գ. ԿԼ. Դ. Որոնդի և Մի. հրամայ անուամբ կը յեշտակէ զհայազգի

Թագաւորն։ Կուրտոս Պատմ. Աղբ. հա. Ա. էջ. 272. Եւ Դար. Գ. էջ 278.
1. Հինգ Պետ. հա. Գ. էջ 39.

նաց բիւրոյն միակ ¹ փրկութեան մի-
ջոյնները, Դէպք մը՝ որ թէպէտեւ հին
պատմութեան մէջ գոգցես առաջին
տեղը բռնած է, թէպէտեւ միայն յոյն զօ-
րականին քաջարութեան ընծայուած,
սակայն ամեն երախտագէտ սիրտ և
միտք՝ քաջամուտ պատմութեան ժա-
մանակին և պայմանին Հայաստանի,
ստիպուած է Քսենոփոնի հետ՝ հայ
ազգին մարդասիրութեան մեծագոյն
շնորհք խոստովանել զայն:

Իրաւքընէ, առնենք պահ մի այն յու-
սահաստ արշաւանաց պատմութեան
հետ՝ նոյնպէս աշխարհագրական տախ-
տակն ևս գիմացնիս, ընդ որ կտրեցին
անցան, և այս ճամարութեանս բոլ-
րովին կը համոզուինք:

Պատմութիւնը կը վկայէ թէ, կըրտ-
սերն կիւրտսի բանակն՝ որուն գաշնա-
կից էին Յոյնք, Քսենոփոնի հրամանա-
տարութեամբն, արդէն իսկ կուռակ-
սայի ճակատամարտին և թագաւորին
մահուամբը, կիսով չափ անձնատուր
եղեր էին յաղթակցնին՝ Ուշեղն Ար-
տաշիսի, և մնացածներն ալ առտ անդ-
յիրուցան եղած: Յոյնք բոլորովին չի
շարդուելու պատճառաւ՝ պաշտպանու-
ղական ոճը բռնելով՝ կ'ուզեն 'ի Յոնիս
յետս նահանջել: Բայց թշնամին 'ի յե-
տուսա իւր կարկտի նման նետերը ա-
նոնց վրայ տեղալէն չի դադրիր: Յըր-
տասարսուտ ձմեռն վրայ հասեր է,
վառելեաց և պարենի պակասութիւն
վերջի աստիճանի է, և մահն անպա-
կաս: Թէպէտ և Յոյնք իբրև արշը օր-
հասականք աստ անդ պղտր յաղթու-
թիւններ ալ կ'ընեն, սակայն երկկուզն և
տագնապը անհնարին է:

Զարագայ գետեղերքն հասնելով,
Պրոքսէն, Մեմնոն, Ագիաս, Կլէարք և
Սոկրատ զօրավարներն ևս կը կորսնցը-
նեն՝ Տիսսափեռնի դաւաճանութեամ-
բը: Յոյնք կ'ուզեն կամ այն հարաւա-

յին ճանապարհովն յետս նահանջել
որ կը հանէր 'ի Բարեւլն և 'ի Մարս, և
կամ՝ միւս ճամբովը՝ որ կը տանէր 'ի
ատեղի թուի և անտի 'ի Լիւդիա և
Յոնիս: Սակայն ուրիշ գետերէն զատ՝
Եփրատն ևս պետք էին անցնիլ: Բայց
այս՝ ի Վտանգօք համայնալին՝ կորրս-
տեան Յունաց, և գոգցես անկարելի էր:
Ուշ դնենք յոյն զօրավարի՝ մը խօ-
սիցը որ կ'ըսէ. « Անստոյգ է թէ ինչ
գետեր դիմացնիս պիտի ելլեն. այլ ե-
փրատն անտարակոյս: Սակայն և այս
չէ մարթ անցնիլ եթէ թշնամիք անոր
անցքն ևս գոցեր են: Հարկ է պա-
տերազմիլ. բայց մենք ձիաւոր զօրք
չունինք. իսկ թշնամոյն՝ անթիւ են,
եթէ յաղթենք՝ ոչ ոք պիտի կարենանք
սպաննել. իսկ եթէ յաղթուինք ամենք-
նուս վերահաս կորուստը պատրաստ
է »:

Ուրեմն մի միայն պարիսպ հետա-
մուտ թշնամոյն դէմ՝ կորդուաց շղթա-
ներն էին, որոնց ստորուտը հասեր էին
արդէն Յոյնք. և Հայաստան տանող
անցքը միակ աղտուութեան միջոց էր
և համառօտ: Բայց կարկառը աստի և
կարկառը անտի, մանաւանդ ձեան
տարափին հետ՝ կատաղի կորդուաց
(Բիւրտք) նետերն ևս տեղալով՝ Վերայ
Յունաց կը խափանեն անոնց ընթացքը
և յուսահատութեան մէջ կը ձգեն: Սո-
վալլուկ և ուժաթափ զօրականքը, կը
սպասեն թէ քիչ ժամանակէն կամ
ձեան հիւսոյ և կամ Պարսից նետե-
րուն տակը պիտի թաղուին, եթէ դի-
մացնին անցը մը և նոր աշխարհ մի
չի բացուի զանոնք հիւրընկալելու հա-
մար:

Հօս արդարեւ, հօս կը կանգնին հայ
ազգին և Հայաստանի դրուատեաց
կոթողներն և պետք ենք լսել: Արդարեւ
Քսենոփոն ² զօրաց սպառնալիքն և
օրհապական վերաւորեալքը՝ Հայաս-
տանի անուամբը միայն կրնար 'ի լաւ
անդր յիշել: Յոյց տուաւ Յունաց զՀա-

1. Ասանդի տարակուսելի է թէ արդեօք Յոյնք
պիտի կարենային այն եզանակին իրենց աշխար-
հը վերադառնալ՝ եթէ Հայաստանի անցքը չի
բռնէին: Մանաւանդ եթէ բռնէին վերջ զՀայս
իրենց առաջնորդ և ձեռնաւ լուսնեային:

1. Քսենոփ. Արշ. Կիւր. Բ. ԴԷ. Դ. էջ 43.
2. Նահապէ Բիւր. Յուս. հտ. Բ. Գ. ԴԷ. Ե.
էջ. 77:

յաստանն իբրև աւետեաց երկիր իսրայելացւոց առաջնորդին պէս՝ ըսելով. « Զօրականք քաջալերուեցէք. այս լեռներն անդին անցնելնուդ պէս, դիմացնիդ պիտի ելլէ Հայաստան, երկիր ընդարձակ և բարեբեր¹, որ ձեր ամեն նեղութիւնները շուտով մոռցնել պիտի տայ. և թէ անտի Բունաստան տանելու համար, ամեն կողմէն ճանապարհք բաց են »:

Սակայն մեծագոյն և ումնադժուարին բանը անցնելն էր, Յոյնք՝ կրնանք ըսել թէ բողբոջին, կ'անդիտանային այն լեռանցամէջներն: Ի Մարս և 'ի Պարսկաստան տանող անցքն ևս՝ այն պատերազմի պատճառաւ անդործածական մնալով, ձիւնով և սառով ծածկուած էին: Ուստի առանց համայնակորուստ վտանգ աչք առնելու, կարող չէին Յոյնք իրենց վաստակարեկ զօրքերն անոնց մէջ գահաւիժել: Աստ յառաջ կ'անցնին փոքր Ասիայէն և 'ի Պարսկաստան ղերուած Հայազգի զինուորքն, որոնց վերջիները, ըստ Քսենոփոնի, Արտաշէսի զօրքէն գերի Ձ վարած էին Յոյնք. և կ'առաջնորդեն բիւրոյն Բունաց՝ այն անձուկ կիրճերէն, և վերջապէս կը հանեն անվնաս 'ի Հայաստան:

Աւան՝ ուր կը հասնին Յոյնք, մեծ էր: Տներն ընդհանրապէս աշտարակաւոր էին, որոնց մէջ տեղ նախարարին ապարանը կը բարձրանար: Տեւեբոաս

1. Ուստի ունեցեր էր նա Հայաստանի այս գեղեցիկ ծանօթութիւնն: Պատմութիւնն այսչափ կ'ըսէ, թէ « Իրենց ըսուած էր »: Ուստի կրնայ մտաբերուիլ թէ անշուշտ Բունաց բանակին մէջ կային նաև 'ի փոքր Ասիոյ և 'ի Պարսկաստանի Հայազգի զինուորք և առաջնորդք, որոնց օգնութեամբ յաջողեցան Կորդուոց լեռներէն անցնիլ: Վասն զի Յոյնք երբ Հայոց առան մը հասնելով՝ անոնց պատնապետէն ամենամեծ ընդունելութիւն գտան, ու գեղեցի իրենք սը փոխարէն մ'ընէր: Իսկ Հայ իշխանն ուրիշ բան յանձն չառաւ, կ'ըսէ Քսենոփոն, բայց 'ի իրեն համազգիներէն զորս փնտռելով բանակին մէջ առ ինքն կ'անուոյր: Դարձեալ ինչպէս չըջակայ ամենայն ազգաց՝ այսանքն նաև Քսենոփոնի՝ արգէն քաջամեհութիւն էին Հայ ազգին և աշխարհի բարեմասնութիւնը:

2. Նահանգ. բիւր. Բ. գլ. Ե. էջ. 77:

գետն անցնելով, կը թնակոխեն յարմառեան Հայաստան, որուն կուսակալն կամ Սատրապն էր Տրիբազ¹:

Այս նախարարը Բունաց մուտն 'ի Հայաստան լսելուն պէս՝ իւր հեծեալներովը կը փութայ ընդ առաջ Բունաց, 'ի նշան գեղեցիկ հիւրընկալութեան: Կը խրախուսէ զՅոյնս, թէ բնաւ չարիք չընելէն դատ, սիրով անոնց ամենայն օգնութիւն ևս կ'ընէր, այս պայմանաւ, որ Յոյնք ևս կարգաւորեալ կերպով անցնէին առանց ումեք զնասելոյ: Այս դաշինքով անոնց գլուխն անցած 15 փարսաւս ընթանալէն, յետոյ բազմութիւն գեղերէ շրջապատեալ իջնաններ կը հասցընէ: Ձեան անընդհատ տարապին և հիւսիսային սառամանիքը, որոնց սաստկութիւնը նկարագրելու համար ատտիկեցի մեղուին լեզուն պէտք է, կը ստիպեն զՅոյնս Հայոց բնակարանացը մէջ ապաւինիլ:

Անդ առաջին անգամ նոթի զօրականքը յիմարեցան. երբ տեսան անբաւ առատութիւն ուտելեաց և ըմպելեաց, միտ ամեն տեսակ ընտանի առանոց և հաւուց, ընդհեյնք, գարեջուր, անուշահոտ գինի, խոզի ճարպ, կնճիթ, 'ի նոյլ և 'ի դառն բեւեկնոյ մը զուած իւղ, ինչպէս նաև իւղք անուշուրը օծանելու համար: Բայց ամեն բանէն աւելի Հայ ժողովրդեան անոնց վերայ ունեցած գուրգուրանքն՝ անպատմելի է: Անդ իբրև երկրորդ հայրենիք, ամեն տեղ կը մտնեն կ'ելլեն Յոյնք ազատօրէն. և ամենէն մարդասիրութիւն գտած, ուրախութեան երգերով իրենց վրանները կը վերադառնային, կ'ըսէ պատմութիւնն² ամիս:

Բայց 'ի վախճանի Հայ ժողովրդեան բարերարութեանց փոխարէն՝ չարու.

1 Հաւանական է թէ այս Տրիբազին յաջորդէն և կամ անոր որդին է, զոր յիշեն արեւմտեան պատմագիրք. թէ Սելեւկեանց ժամանակ կը թագաւորէր Հայաստանի: Սակայն ո՛վ ալ ըլլար այսչափս յայտնի թէ ամենէն աւելի պատուական նախարարն էր և մտերիմ՝ արքայն: Ասոր ինամոցն ետըք կը սնանէին Ստրաբոնի ժամկոց 802 երեսին մէջ նկարագրած Նիսեան՝ Բիվալըն. և նա միայն ունէր իշխանութիւն 'ի ձի հեծուցանել զարքայն:

թիւն կը հատուցանեն Յոյնը , սու-
տակասպառ պարսկի¹ մը թեւագրու-
թեամբ :

Հայոց այսուհետեւ ըրած վեմական
ձեռնտուութիւնն առ Յոյն , աւելի
պէտք են զարմացնել զմեզ , եթէ ա-
նոնց իրազէտ պատմէին միտ դնելու
ըլլանք : Վասն զի երբ Տրիքազայ եր-
կիւղէն , իրենց արշաւանքը կ'երազէին
Յոյնը եփրատայ ափանցը վրայ , հիւսի-
սախառն հովով սաստիկ բուքն ճամ-
բաները գոցեց : Կենդանիք և գերիք կը
սառնին , աւանէն առած փայտն ու
պարէնը կը հատնին : Շնքաղցութեան
հիւանդութիւնը բանակին մէջ կը ճա-
րակի , մեռելոց թիւն երթալով կը յա-
ւելու . միով բանիւ բոլոր Յունաց բա-
նակը ձեան տակ թաղուած է :

Դարձեալ Հայք կ'երևնան աստ աւե-
տաբերք խաղաղութեան և փրկութեան
և մերձաւոր աւանը կը ցուցնեն Յու-
նաց : Սակայն քսենոփոն որ վերջապահ
զօրացը կը հրամայէր , առաջապահ զօ-
րաց փրաւորեալքը ձեան մէջ թաղուած
տեսնելով , արտասուք կը թողուր կ'ան-
ցնէր , յուսացընելով թէ կու զանք
կ'առնենք զձեզ շուտով :

Աւանն հասածին պէս դարձեալ ամե-
նայն ընդունելութիւն կը գտնեն Յոյնք .
դարձեալ մի և նոյն առատութիւնը
կը տեղայ ամենուստ ուտելեաց , ըմպե-
լեաց և վառելեաց : Բաց աստի Հայք կը
մատակարարեն Յունաց ընտիր ձիեր և
լորիններ , պարէն և ամենայն կազմած
պատերազմի : Շատ սրտաշարժ են
արդարեւ հայ ժողովրդեան անոնց վրայ
ցուցած գութն ու գորովը : Ոչ միայն
կ'ուսուցանեն Յունաց այնուհետեւ ընե-
լիք ճամբանին , այլ թէ ձիերուն ոտ-
քերը պէտք էին կապերտ կապել որպէս
զի սառուցեալ ձիւնէն չի փրաւորուին ,
և թէ զինուորք պէտք էին սև ակնոց

1. Յունաց յառաջապահ զօրքը այս պարսկին
հաւատալով , որ կ'ըսէր թէ Տրիքազայ զօրքէն
գասալիք եղեր է , ծանուցանելու համար թէ
Հայք կը պատարաստուին Յունաց վրայ յարձա-
կելու , մեծամեծ աւարհարութեամբ և հրկի-
զութեամբ դաշտ մեկնեցան անտի :

դնել ձեան սպիտակութենէն չի կուր-
նալու համար : Այս ամեն բանն ընեղէն
ետեւ հայ աւանապետն և մանկտին ան-
ձամբ ևս կ'ուզեն առաջնորդել անոնց :

Ուր տեսնուած էր հեթանոսութեան
ժամանակ այսպիսի վեմական անյի-
շաչարութիւն և համակրութիւն առ
օտարազգիս . մանաւանդ թէ առ թըը-
նամիս արքային , որուն Հայք ամենա-
հաւատարիմ հպատակներն¹ էին : Որ-
չափ ալ տկար համարելու ըլլանք այն
միջոցին Հայաստան , սակայն յայտնի է
թէ անոնք որ մէկ դար յառաջ Դարե-
հի² վշտասպեայ մեծագոր բանակաց
այնչափ կոտորած տալով մինչև յԱ-
սորեստան ևս արշաւեցին ըստ լը-
նորմանի , և քիչ ետքը Վահէի հրամա-
նատարութեամբ 47,000 զօրքով Մեծին
Աղեքոսանդրի դէմ ևս խիզախեցին , կա-
րող էին ևս առաւել Յունաց Բիւրոյն ա-
նակնկալ հարուած մը տալ կամ միւրոե-
ցընել , որոնք 8000 հազիւ թէ մնացեր
էին և իրենց տանցը մէջ ապաւիներ :

Սակայն Հայոց չըրած բարբարոսու-
թիւնն³ Յոյնք իւր ի գլուխ հանեցին :
Կասկածելով աւանապետին վրայ , իբր
թէ զիրենք անել տեղեւոր մէջ կ'ուզէ
մոլորեցընել , սաստիկ զանակոծ ընե-
լով անոր որդին ևս գերի տարին , Բայց
այն ժամանակ իմացան Յոյնք Հայոց ե-
րախտիքն և ցաւեցան , երբ Հայաս-
տանի սահմանէն ելլելուն պէս⁴ խալի-
բայց , Տայոյց , Մոսորաց և ուրիշ ծով-
ափինայ ժողովրդոց խժգժութիւն-
ներն սկսան կրել : Բայց ի զուր , ժա-
մանակը կատարեց իւր շրջանն . և
մարդկային աղզի պատմութիւնը՝ զրեց
անջնջելի իւր յաւերժական էջերուն մէջ
Հայոց բարբարոսութեանցը քով , նոյն-
պէս Յունաց ապերախտութիւնն : —

1. Թէպէտեւ Արտսերն Արտսի մանակցու-
թեամբն Հայաստանի ժողովրդոց մի մասն ևս
ապստամբած համարելու ըլլաւք յԱշէղն Ար-
տախէս , սակայն Քսենոփոնէն գիտեցրէ թէ
Տրիքազ նախարարն ամենահաւատարիմ բարե-
կամն էր արքայի :

2. Պերսեպոլիսի սեպաձև արձանագրու-
թեանց մէջ զանազան պատերազմներ և հայադ-
գի զօրավարք կը յիշուին և յաղթութիւնք :

խոյն մենք թողլով Յունաց բերր, Հա-
յաստանի սահմանին մէջ կ'ուզենք վե-
րադառնալ և անոր երկրագործութեան
ձեռքով չըլլակոյ մարդկութեան ըրած
օգնութիւններն հետազօտել:

Արդ եթէ Հայաստանի անտէրու-
թեան և բնութեան մեռած ժամանակն
անդամ այնքան բարգաւաճ¹ դտան
Յոյնք և հիւսցան, ինչպիսի հիանալի
տեսարան կը ներկայացնէր ուրեմն
Արամայ, Պարոյրի և ԿՏիգրան Ա. յա-
ջորդող վանսյ (կամ Մաննայի), և Ա-
րարայկայ կամ Ուրարայի իշխողաց
ժամանակ: Այժմ երբ գորունն իւր զո-
վացուցիչ ցօղն և Շնիկի իւր ջերմանքով
ճառագայթներն 'ի մի խառնելով կը
ներգործէին զոյգ ընդ երկրագործա-
կան արուեստին, այն արգաւանդա-
հող² և ջրաշատ երկրին ծոցերուն
վրայ, այն ժամանակ տեսնելու էր այդ
Ասիոյ Զուիցերին³:

Հայաստան արդարև, ուր զոյգ ընդ
զրոյց Հրէից կը հաստատեն նաև այժ-
մեան երևելի աշխարհագիրք⁴, թէ

1. Եթէ Քսենոփոնի հայ ժողովրդեան երկրա-
գործական գործեաց, անասնաբուծութեան և
համբարանոցներուն վրայ ըրած նկարագրէն
գտատելու ըլլանք, արդարև անդէտգութեան
ոսկեգարն եղած պիտի ըլլայ մեր թուականէն
նախկին ցարգ Դ. գարն:

2. Այսպէս կը կոչեն զՀայաստան Մ. Ոորե-
նացի, Ղազար փարպեցի, Յակոբ Մեծոփեցի
և Սարաբոն:

3. Եւրոպացի Զանապարհորդներէն և աշ-
խարհաբան շատերը՝ որոնք պարապեցան 'ի
հրաշալիս նորին, ինչպէս օրինակ իմն. Սէն
Մարգըն, Պօրե, Ռիդգեր, Ա. Ժողդեր, Գ.
Բորդեր, Է. Շուլց, Փ. Փարթ, Շփթ և Տօւրդ,
Սուրբադ, Կ. Դեմիս, Գ. Ռադդէ և Գ. Սի-
վեր, Երև, Պրանդ, Ալաքոդ, և Իրքսոն, Միւլ-
պախ, Հափիւնոն, Տիւպուս, Մոնդիկոյ, Բօնի,
Թալլոր, Սիթերեր, Բիթեր, և Պրայս, այս
պէս կը կոչեն: Իսկ 'ի հոգ Սարաբոն, Պաղ-
մաս, Թէոփանէս, Երատոսթենէս և Քսենոփոն:

4. Ապիւր կը հաստատէ թէ վերին տարիներս
եղած բոլոր աշխարհաբանական խուզարկու-
թիւնք կ'ապացուցանեն Հնդամատներն պատ-
մական այս վիպութիւնը, թէ իրաւացին Հա-
յաստանի մէջ տնկեց Աստուած զԵրախոն, և
թէ Տիգրիս, Միկրատ, Երատս (Գեհնոն) և Փա-
սիս (Ճորոխ) են չորս եղեմական գետերն: Եւ
բայց 'ի բայց իր մերժէն այն գիտնող կարծիքը
թէ Բաբել բարձրավայրքն եղած ըլլան մարդ-
կութեան խանձարուրեն: Վասն զի կը յաւե-

տնկեց Աստուած զԵրեմ, և Նոյ անդէն
յետ ջրհեղեղին սկիզբն արար նախկին
մշակութեան երկրի, բնա չի կորսն-
ցուց յետոյ իւր անդամակութեան այն
գեղեցիկ առանձնաշնորհութիւնն, Նախ-
նիք մեր անյիշատակ ժամանակաց 'ի վեր
անշուշտ ամեն բանէ աւելի երկրագոր-
ծական արուեստին բարգաւաճմանն
հոգ տարան, բնական և նահապետա-
կան կենաց ամենակարևոր ըլլալուն
պատճառաւ:

Թէպէտ և մարիբասեան աւանդու-
թիւնը (1300ին) Արամայ համար կ'ընէ
տիրելով փոքր Հայոց, լեցուց զանոնք
բնակչօք և մշակներով, բայց տնկէ յա-
ռա՛լ իսկ հայազգի գաղթականաց ա-
րուեստը մշակութիւնն էր:

Յիրաւի, Մովսէս իւր հնգամատենը
գրած և Հայաստանի մէջ եղեմական
դաշտաց նկարագիրն ըրած ժամանակ,
չենք տարակուսիր թէ անոր համաձայն
տեսարաններ կը ներկայացնէր Հայոց
աշխարհը հետախուզին առջև, յեղիպ-
տական մշակութենէ ներշնչեալ և օգ-
տեալ որոնք վերաբերութիւնքն ընդ
Հայս՝ տեսանք արդէն 'ի վեր անդր:

Այս ենթադրութիւնը, շատ լաւ կը
հաստատեն կրկին հնաւանդ գրոյցը
որ յազգիս և առ օտարս: Առաջինն է
Շարայի և Շիրակայ վրայ հնարուած
տոհմային առածն¹: Այս առածն՝
թէպէտև ամենահին, բայց հաւանօրէն
այն կարծեցեալ ժամանակէն ետքն
հնարուած ճշմարտութիւն մի կ'երևի:
Շարայ անունը՝ նախապատմական յա-
տուկ անձի մը որպիսութենէն աւելի,
պատմական ժամանակի մշակութեան
և Շիրակայ առատազեղ բերոցն հա-

լու նա, թէ արդի հետազօտութիւնք իմացան
ստուգելու թէ այն երկրին հանգամանքներն և
բարխառնութիւնը նպաստամատոյց չէին բնա-
կենաց և բարգաւաճելոյ մարդկութեան:

1. Որքենացոյ Ա. գրոց ԺԲ գլխուն մէջ կը
զուրցուի թէ Արմայիս յետ մահուան Արմենա-
կայ իւր գաղթականութիւնն յառա՛ր վարելով,
Երասիս գետոյն վրայ Արմաւիր քաղաքը շինեց,
և իւր «չատակեր և յողովածին» որդին Շա-
րայ՝ Շիրակայ արգաւանդ գաւառը կը զբն-
ուայի այս առածը. «Թէ քո Շարայի որդին
է, մեր Շիրակայ ամբարքն չէն»:

ւաստիք են : իսկ երկրորդն է կոր-
ճէից գաւառին Որսիւր կամ Որսիւրանք
կոչուիլն՝ յանուն Ոսիրիսի, երկրագոր-
ծութեան աստուածոյն, զոր Հայք ապա
Տաւրոս փոխեցին :

Առ այս կը հային Հերոդոտոսի՝ խօս-
քերը որ կ'ըսէ թէ Մէրիս արշաւելով
'ի Հայաստան՝ հասաւ մինչև 'ի Փափս
դետ : Բայց 'ի զարձին եգիպտացւոց
մէկ մասն թողուց այն գետափանցը
վրայ, որպէս զի երկիրը մշակեն և ան-
տի յեգիպտոս արգիւնքը հասցընեն : Եւ
Ստրաբոն² կ'աւանդէ թէ կողքիսա-
ցիք և խաղտիք՝ ազգակիցք էին եգիպ-
տացւոյ :

Սակայն մենք առանց բացասելու
այս պատմական վկայութիւնքն, ու-
րոնք մեր ազգին և աշխարհին պատիւ
կը բերեն, այնու զի անյիշատակ ժա-
մանակաց 'ի վեր եգիպտացւոց պէս քա-
ղաքականացեալ ժողովրդեան հետ
սերտ յարաբերութիւններ ունեցաւ,
կ'ըսենք թէ մեր Որսիւր գաւառին՝ յա-
նուն Ոսիրիսի կոչուելուն պատճառը
կրնար ուրիշ տեսութեամբ իսկ եղած
ըլլալ, առանց իսկ եգիպտացւոց աշ-
խարհակալութիւնն անգր ձգելու :

Եւ իրացընէ. ինչպէս Լատինք կամ
Հռովմայեցիք իրենց բարբառովն Բա-
գոս³ անուանեցին եգիպտացւոց Ու-
սիրիսն, և մշակութեան պաշտպան
կարգեցին, այսպէս նաև շատ բնական
էր որ Հայք ևս իրենց բնիկ բարբառովն
և այլով իմն անձնաւորութեամբ 'ի կիր
արկանէին զայն, այսինքն է Տաւրոս⁴
կամ Տորոս իսկ որովհետև հին աշխար-

հազիրը ընդ Ստրաբոնի¹, կ'ըսեն թէ
ոչ միայն Հայաստանի հարաւակողմի
բնակիչքն, այլ նաև ցկապագովիա և
ցկոմագինայ եղած երկիրներն և Մեծ
Հայք անգամ Տորոսացիք կը կոչուէին
'ի հնումն, մանաւանդ Տարոնի, Մո-
կաց և Կորճէից գաւառքն, ուր էր Ու-
սիր՝ Տաւրոսացիք և երբեմն Սասունցիք
կը կոչուէին, ուրեմն անժխտելի կեր-
պով կրնանք եղրակացընել թէ Հայաս-
տանի հարաւային կողմերէն զուրա, ա-
րևմտակողմանք, ևս ընդ հիւսիսի ծաղ-
կեալ էին մշակութեամբ, Արամէնցոյա-
րոյ՝²⁵ իշխանաց գաւազանի ներքև :

Քսենոփոնէն²⁶ կը գիտցուի թէ Հայք
առ հայկազն Երուանդաւ, մանաւանդ
քաջին Տիգրանայ ժամանակ, Հայաս-
տանի ընդարձակ դաշտերն և հովիտ-
ները այնպէս մշակած էին ցորենի,
գարույ, կնճժի, կտաւառի և ուրիշ
բերքերով, որ իրենց հօտերն և նախիր-
ները ճարակելու համար, քաղդէացւոց
կամ Կորդուաց լերանցը կը կարօտին :
Իսկ քաղդէացիք ընդհակառակն Հայոց
մշակուլ դաշտերը՝ դաշամք կը վար-
ձեն : Այսմ հաւաստիք են և Մ. Խորե-
նացւոյ³ Տիգրանայ համար զուրցած
խօսքերը թէ « խաղաղութեան և շինու-
թեան բերողն՝ իւզով և մեղով՝ գհա-
սակս ամենեցուն պարարէր » :

Երուանդեան Տիգրանէն մինչև ցը-
կանդնումն երկրորդ հարստութեան,
որ մէկ ու կէս դարուց միջոց կայ, կըր-
նանք ըսել թէ Հայաստանի մշակու-
թեան վիճակը ինկած չէ բնաւ, այլ
մանաւանդ թէ յունական գիտու-
թեամբք և արուեստիք ևս առաւել
բարդաւաճեալ : Չենք տարակուսիր ը-
սել թէ ամեն միջոցներէն աւելի՝ Եր-
կրացործութեամբ կեդրոնանալով Հայք

կիրնեւուն, յորս նախ ծագեցաւ մշակութեան
արուեստն : Անշուշտ այս կ'ուզէ ակնարկել Նա-
ստաթէոս՝ ի լուծմունս Իփոնիսեայ Բեթլեքիսի,
ըսելով. թէ « Ոսիրիս արօրադրէլ սորվէցոյց
Տաւրոսացւոյ : Ասոր ապառայց է նորերս Վան
գաւառն՝ օսկիճոյլ կոճու զլուսն ևս :

1. ԹԱ. գրք. Է. 792-793 :
2. Արշ. Գրք. Գ. Գ. Բ. Է. 261 :
3. Ա. Գ. Ի. Գ. Է. 107 :

1. Գ. Գրք. Է. 792-793 :

2. ԹԱ. գրք. Է. 763 :

3. Այսպէս կ'ըսէ Տիգրանիս 'ի հաշմեդու-
թիւնս իւր :

4. Վան զի Տաւրոս կամ Տորոս բառն, էթէ
հայերէն քաղք կամ քաղաք արմատականէն յա-
ռալ եկած համարինք, և էթէ յոյն կամ լա-
տին CAURUS բառէն, միշտ արջառ կամ զոյն կը նը-
շանակէ : Որովհետև այս կենդանին էր լաւագոյն
գործի կամ ոչնապօրոշմ նախնական ժամանակի
երկրագործութեան, իւր վաստակաւորու-
թեամբք : Շատ հաւանական է թէ Հայք ևս Ե-
գիպտացւոց նման աստուածական պաշտան մա-
տուցանելով անոր՝ երկրագործութեան պաշտ-
պան կարգեցին Հայաստանի հարաւային եր-

իրենց հողին վրայ, հարստացուցին ազգային գանձը, կազմեցին զինուորական զորութիւնն և վեճկացեաց բռնակայութեան լուծը խորտակելով ունեցան ազատ ինքնավարութիւն Արշակունեաց թագաւորութեան ներքին:

Վաղարշակ, այս ամենէն աւելի քաղաքակիրթ թագաւորը, որ Քսենոփոնի նկարագրած ինքնակալի մը ամենայն բարեմասնութիւնքն ունէր, Հայաստանի կեդրոնական կամ ներքին նախարարութիւնը բարեկարգելէն յետոյ գեղեցիկ և իմաստուն կարգը 'ի գլուխն իւր և յանդամս, կը կարգէ, կըսէ Խորենացին, և «գկողմանս Մաթաթայ (կեսարիոյ) գՊոնտացիս և զԵղերացիս», այսինքն զսահմանակից նախարարութիւնս և զայնսահմանս նոցա: «Դառնայ առ ստորոտով Պարթարայ ընդ մէջ Տայոց 'ի գիլին և 'ի մառախլուտ տեղիս մայրեաց և 'ի լուաւէտս, գեղեցիկս կարգելով զերկիրն: Հաւասարելով զլեռնայինն և զճերմահոտն' 'ի բարեխառն և 'ի գեղեցիկ վայելչութիւն իւրոյ թագաւորութեան»:

Խորենացւոյ այս խօսքերէն կը տեսնուի թէ Հայաստանի սահմանակից աղգերն՝ դեռ համեմատութեամբ Հայոց՝ շատ յետամնաց էին 'ի մշակութեան, և թէ ինչ աստիճան մեծագոյն փոյթ ունէր այս իմաստուն թագաւորն անոնց յառաջադիմութեանը: Ստէպստէպ՝ այց ելելով, Հայաստանի ներքին գաւառաց հաւասար՝ արտաքինոց ևս քաղաքային և երկրագործական մշակութեանն անձամբ իսկ կը պարապէր, հանգոյն Սողոմնի և Նումայ Պոմպիլիոսներու:

Արտաշէս Ա. ժամանակ որ ըստ արտաքին պատմագրութեան 189 թուականին կ'իյնայ, ժամանակակից և մոեւրիմ Անիիքաղայ. և Միջին Տիգրանայ

ժամանակ, թէպէտ և Հայոց զինուորական զօրութիւնն ըստ վկայութեան Տակիտոսի և Ստրաբոնի՝ հիւսիսէն 'ի վերիացւոց, Քալիբայց, Մոսկեցւոց վրայ կը տարածուէր, և յարեմտից կողքինացւոց և Պոնտացւոց. արեւելէն վերկանայ կամկասարցի ծովուն եղերքը բնակող ժողովրդոց վրայ, ինչպէս հաւուէն Ասորոց, Եփրատացւոց, փուռիկաստանի և Միջագետաց մի մասին. բայց երկրագործական յառաջադիմութեան նկատմամբ մասնաւոր տեղեկութիւն չեն տար, և նոյն իսկ տոհմային պատմագրութիւն մեր լուծէ:

Սակայն որչափ որ անոնք լուծ են, նոյնչափ և աւելի այն ժամանակաց Հայաստանի շերտակայելի ոսկին և արծաթը՝ կը խօսին, որք անժխտելի հաւաստիք են վաճառականութեան՝ որ է միակ արգասիք երկրագործութեան:

Իսկ առ Արտաշէսի Բ. ինչպէս Բագրատունեաց Աշոտ Ա. ժամանակ՝ հասաւ Հայաստան իւր երկրագործութեան վերջին ծայրկատարելութեանը, թողունք Հայ ազգին նախապատմական ոսկեդարերն, պատմականները միայն առնելով՝ այս երրորդն է ահաւասիկ. և անոնց իւրաքանչիւրին մէջ, տարբեր հայ հարստութեան գաւազանի ծաղկածութիւնը՝ քաջավայելուչ և գեղեցիկ կը տեսնուի որպէս զԱհարոնին:

Արդարեւ, վերջի կրկին պարբերութեանց մէջ ծաղկած, կուգեմըսել Արշակունեաց և Բագրատունեաց ժամանակի, անդէորդութեան և շինութեան Հայոց ոսկիդարերն, հին ժամանակի ազգաց գաղափարներէն և յառաջագիմութեան հորիզոններէն վեր բարձրանալով, կ'ընծայեն մեզի նախատիպս ինչ վսեմականս և բոլորովին նորս յերկրա-

1. ԺԱ. էջ 802 և Ե. ԳԼ. ԺԻ:

2. Ստրաբոն իւր ԺԱ. գրքը մէջ կ'ըսէ, թէ երբ Պոմպիոս 6000 տաղանդ արծաթոյ հարկ մը դրաւ Տիգրանայ վրայ, նա անդէն և ազգայնեց զօրաց: Իւրաքանչիւր զինուորին ինչ կաւ 80 դրամայ. 1000 հարեւրապետաց ուրոյն, իսկ հրծեկապետաց և հազարապետաց՝ մէկմէկ տաղանդ:

1. Վասն զի Մ. Խորենացի Բ. գլ. 2. կ'ըսէ թէ. «Ամանային ժամանակն Հովանոցս պատրաստելով, յորժամ զՀիւսիսով երթայր: Դոմս երկուս տափարակս անառաւիթոս հանդերձ լերամբն կազմելով և որոց տեղիս՝ զճերմակութիւն կոչուր 'ի մարմադս այգեաց և բուրաստանայ»:

գործութեան և 'ի յօրինուածութեան, եթէ վերստին հարցնելու ըլլանք զտոհմային և և զօտարազգի պատմագրութիւնս:

Երկրագործութեան մասին բաւական է մէջ բերել հայ Հերոդոտոսին խօսքերն որ կ'ըսէ. « Ասի 'ի ժամանակս Արաաիսի ոչ գտանել երկիր անգործ յաշխարհին Հայոց, ոչ լեռնային և ոչ դաշտային յաղազս շինութեան երկրիս »: Իսկ յօրինուածութեանց նկատմամբ ծանօթ են Իւրոպացւոց՝ Հայաստանի զարմանահրաշ ոստաններու և եկեղեցեաց կիսաւեր յիշատակարանքը, որոնց անթիւ բազմութենէն զատ ճարտարապետական ոճն ևս հանգոյն միշտաբարդին վանայ անմահն է մը և է ազգ ճարտարապետութեան և իմասն հայ հանճարոյն ծանօթ, կ'ըսեն Դեսլէ, Տիւպուա և այլ հնադէտք: Սակայն հայ յօրինուածութեան քննութիւնը այլոց կը թողուի որ իմաստասիրեն, մենք մեր նախաճառեալ նիւթոյն վերադառնանք:

Յերաւի, մինչև ցայս վայր մէջ բերուած տոհմային և օտարազգի պատմութեանց հաւաստիքը՝ յայտնապէս կը հաստատեն թէ՛ Ա. Իսկզբանէ Հայ ժողովուրդը քան զամենայն ինչ վերագաս համարած է գերկրագործութիւնն և միակ աղբիւր հարստութեան աշխարհին: Բ. Արամէն սկսեալ մինչև ցվերջինն՝ թագաւորք մեր զայն կայան իբրև զօրաւոր միջոց վարչութեան՝ խաղաղ և զբաղեալ պահելու իրենց սահմանակից և բազմաթիւ ազգերն, զորս աշխարհակալութեամբ և գաղթական նութեամբ նուաճելով, կը ջանային իրենց գերագահ իշխանութիւնը դարուց 'ի դարս շարունակել անոնց վրայ:

Այս կրկին ճշմարտութեանց իբրև

2. Մ. Խորենացի գիրք Բ. գլ. ԾԶ. արշակունի թագաւորին համար կ'ըսէ թէ. « Յետ անայն առաքինութեանց և գործոց ուղղութեանց, հրամայէ զսահման գիւղից և ագարակաց որոշել... Ասի 'ի ժամանակս Արաաիսի ոչ գտանել երկիր անգործ յաշխարհին Հայոց, ոչ լեռնային և ոչ դաշտային յաղազս շինութեան երկրիս »:

գերեցելի հաստատութիւն՝ վկայ արձանացեալ է Խորենացւոյ Բ. գրոց ԾԵ. գլուխն: Աստ արդարև յառաջ կը խաղայ, յաւէտ յիշատակաց արժանին Արտաշէս Բ. Որպէս զի մէկ կողմանէ ցեղապետութեանց և ազգաստեղծ մէջ ծագած անվերջանալի վիճից վերջ տայ, որք առհաւատչեալք էին հայ ժողովուրդոց առ երկրագործութիւնն ունեցած մեծարանայն, և միւս կողմէն ալ տէրութեան ընդ հանուր բարոյն հետ որպէս զի առանձնականաց ևս օգտակար ըլլայ, ձեռք կը զարնէ այնպիսի գործի մը, որ ստուգիւ 'ի վեր ամբողջայ զնա քան զդար իւր, և արդի լուսաւորեալ թագաւորաց կարգը կրնայ դասել: Վասն զի արդէ Եւրոպացւոց ոճով որոշեց իւրաքանչիւր գիւղից և այգեաց սահմաններ, շինեց գեղեցիկ ճամբաներ, և կանգնեց անոնց եղբւրքը մղոնաշախի վիմատաշ կոթողներ հաստատեց անկարամոլութեան, բժշկական և բուսաբանական պարտէզներ, և ասոնց նման դեռ ուրիշ մեծամեծ գործեր:

Սակայն Ոսիրիսներէն և Արտաշէսներէն աւելի, նոյն իսկ բնական բերումն և բնութիւն երկրին կը յորդորէին զհայ ժողովուրդն անգստին 'ի վաղ ժամանակաց 'ի մակալութիւն երկրի:

Յերաւի, բնութեան այդ ամենահարուստ և բիւր տեսակ ինքնաբոյս և բերքերով երկիրն, բաց 'ի պարսպպատ լեռներէն, որոնք կը պաշտպանէին զբնակիչս շտրջանակի ամենայն թշնամի յարձակմանց դէմ, կը տարածէր ամեն կողմ ընդարձակ դաշտեր, ևս և արգասաբեր հովիտներ լի հացով, գինով և իւղով. որոնք բնակիչներէն զատ, զՀայաստան շրջապատող ազգերն ևս կը կերակրէին: Հայաստանի բարձրաբերձ լեռանց ստորոտները կ'արածէին, ընդ մէջ գետոց և աղբերաց անմահն գեղեցկութեամբ:

1. Խորենացի Իւր Աշխարհագրութեան մէջ կ'ըսէ՝ Թէ Փայտակարան նահանգը տարուէ տարի կը հասունացնէ ինքնաբոյս գարի, բամբակ, և շատ տեսակ ընդեղեններ և պտուղներ:

ձիերու և ամենայն ընտանի անասնոց նախիրք և հօտք: Զրաշանն կարին, իւր եղբմական գետոցն ոռոգմամբ, զորս Հայք եղիպատացւոց նման բաշխելով՝ բոլոր Հայաստանի մէջ կը տաւ բաժնէին, բնութեան այնպիսի վսեմ տեսարաններ կը ներկայացընէր, որոնք բաւական էին ցուցընել թէ յիրաւի եղբմեղած էր երբեմն ընդ յարեւել և անդրանիկ ի մէջ աշխարհաց:

Հռովմայեցիք՝ բոլոր Ասիոյ մէջ երաւ, խաւկան հովիտիս պէս բեղնաւոր դաշտերով երկիր մը չէին կրնար ցուցընել: Քանեփոն, կուինտիոս կուրտիոս և պատմիչք մեր կը նկարագրեն մայր անտառներ, և ազգի ազգի բուսարեւութեամբ դալարագեղ լեռներ, որոնց հետքն անգամ հազիւ թէ մնացած է աստ անդ: Ս. Հերոնիմոս՝ ի Մեկնութեան Կենդանոց զՀայաստան կը կոչէ երկիր, զոր ոռոգէ Երասխ անհաւատալի արգասաւորութեամբ բերոց: Բանաստեղծք Լատինաց յաճախ կ'երգեն զարմրտիս, զանուշահոտ խունկս և զքժկական բոյսս Հայաստանի: Ըստ վկայութեան քաջահմուտ աշխարհագրի² ուրումն տոհմայնոյ, 300էն աւելի միայն ընդեղենի տեսակք կը գտնուին անդ: Շատ զարմանալի է և այս. յԵւրոպա 1000 մէգր բարձրութեան վրայ գըտնուող բոյսք և պտուղք և որթք՝ յերևան, ի Գանձակ, յԱրարատ, ի Կարին և ի վան 1300էն մինչև 4000 բարձրութեան վրայ իսկ կը հասունանան: Վասն զի հիւսիսէն կովկասու գօտիք կը պահեն զանոնք աւերիչ և ցուրտ հողմերէ: Իսկ Կորդուաց և Տորոսի լեռնաց շղթայքն իբրև անտեղիտալի ամբարտակներ կը բարձրանան հարա-

ւային կիզիչ խորշակին դէմ և մթնոլորտին բարեխառնութիւնը անայլալի կը պահեն յամարային:

Ալատն Մասիս և դրացին իւր Արազած, որ գոգցես ի միասին ծնան ի պլուտոնական յանդընդոց, և մի և նոյն կլիմայի տակ ծերանալով յանդիշատակ ժամանակաց ի վեր՝ եղան տուն և տեղի ազատաց, կիսով չափ առատ խոտ պատրաստելէն զատ, նոյնք իրենց յաւերժական ձիւնով ծածկեալ գագաթամբք Հայաստանի կեդրոնը կեցած՝ օգոստոսի բոցատապ եղանակին անգամ չըրկակայ նահանգաց զովութիւն և կենդանութիւն կը շնչեն: Գարնանային և ամառնային եղանակաց մէջ, ինչպէս առաւօտեան արշալուսոյն, այսպէս ալ երեկոյեան վերջալուսոյ ժամանակ, Հայաստանի ընդարձակ դաշտերն ելիսեան դաշտաց նման երջանիկ ժողովրդոց երգեր կը հնչեցընէին:

Աւստի Հայաստանի պէս երկիրն ուր յարափոփոխ տեսարանք գետոց և լճաց, անտառաց և դաշտաց, ձիւնապատ լեռանց և խորանէջ հովտաց՝ գերկին անգամ յինքեանս ձգած էին, որ անոր չորեքկուսի սիւներուն վրայ կը յենուր, ըստ հնաւանդ՝ յիշատակարանին, և ըստ ասելոյ Ստրաբոնի³, մեզր իսկ կը ցօղէին, զարմանք չէր թէ երկրածնաց ազգ և ազգիք ևս յափըշտակէին ի գեղ նորա, և նոյն իսկ Պարսից պէս մեծ ազգն սքանչանալով Հայաստանի վիճակին վրայ, մի և նոյն մշակութեան ոճը մտցնէր նաև արիւական աշխարհաց մէջ: Եւ իրքը մուծին, ըստ վկայութեան խորենացոյ³, առ Արատի և իւր և մեծամեծ օգուտներ տեսան: Ստրաբոն⁴ կ'ըսէ՝ թէ իվերիացիք և Ալուանք՝ սիրողք երկրագոր-

1. Ստրաբոն իւր ԺԶ. գրոց էջ 1075, և ալ. Լուր կ'ըսէ թէ միայն Նիքրատայ վրայ 300 փոսեր յորինուած կային՝ այն գետոյն բերէն սկսեալ մինչև ցիւրեղուն: Անոնց մեծ մասն Հայք չինքր էին անուշտ, վասն զի Հայաստանէն կը ծագէր և անցանէր ընդ մէջ նորա: Իսկ Նրատայ համար կ'ըսեն Հերոդոտոս և Կալիսթոն: Նեա. թէ բաժանէր ի 40 գետակ:

2. Հ. Գևորգ Վ. Ալեքան, Տեղագր. Մեծին Հայոց:

1. Եղիպատացւոց հին նշանագիր յիշատակարան մը մէջ կը բերէ Փ. Շմիթ իւր հին ազգաց պատմութեան մէջ, որ կ'ըսէ թէ Քուսթա Գ. տիրեց այն աշխարհի Ռեմենիներուն կամ Արմենիներուն, որուն չորս սիւներուն (անշուշտ Արարատի, Արագածի, Զաւրոսի և Կորդուաց կամ Տարոսի լեռանց) վրայ երկիրքը կը հանգէ:

2. Ա. Գեղեք, էջ 125:

3. Բ. Գ. ՄԶ. էջ 278:

4. ԺԱ. էջ 764, և ԺԲ. էջ 732.

ճութեան և խաղաղութեան , զիւրա-
կապրին Հայոց մշակութեամբն : Իսկ
Յովհանն ¹ Կթղ կը յաւելու թէ արեւ-
ելեան և հիւսիսային սահմանակից ժո-
ղովուրդը առ հասարակ, որոնք անդըս-
տին Հայոց խնամակալ վարչութեան
ներքեւ կը բարգաւաճէին , Աշոտ Ա.
ժամանակ բոլորովին թողուցին իրենց
աւազակութիւնքն և Հայոց մշակու-
թեամբը կը զբաղէին :

Ուրեմն մեծ է Հայ ազգն նաև 'ի
մշակութեան . այսպէս ուրեմն մեծա-

դոյն ևս են անոր ազգեցութիւնքն և
օգուտներն առ հիւսիսական ժողո-
վուրդս :

Հայաստանի կամ Հայոց պէս բազ-
մապատիկ բերքերով և անդէորդու-
թեամբ բարգաւաճ ազգն , հարկ էր որ
վաճառականութեամբ ևս ամեն ազ-
գաց ծանօթ եղած ըլլար : Եւ ահաւա-
սիկ ուրիշ կարևոր կէտ մ'իս, որով
պիտի անանին վերծանողը հետեւեալ
գլխուն մէջ, թէ Հայք մըշափ օգուտ
ներ ըրին մարդկութեան ,

1. Պատմ. Հայոց. ԳԼ. ԺԷ :

Կը շարունակուի

Հ. Բ. ՍԱՐԿԻՍԵԱՆ

MARTYRE DE S^T ATHÉNOGÈNE EVÊQUE

Saint Athénogène naquit de parents chrétiens, dans la province d'Ebèghe, au village de Pilaktové, appelé aussi quelquefois Sakroubiné, sous le gouvernement de la ville de Sébaste. Arrivé à l'âge mûr, il se maria, selon l'intention de ses parents. Ayant un fils, il le nomma Badropulose; il vivait pieusement: l'évêque de Sébaste le consacra prêtre, et puis il fut créé chorévêque du même pays que nous avons mentionné et il en remplit les fonctions avec zèle.

En ce temps arrivèrent les Gothis barbares, qui envahirent toute la contrée, et emmenèrent captifs dans leur pays beaucoup d'hommes, de femmes et d'enfants. Ce saint Athénogène, comme un fidèle pontife de Dieu, s'attristait sur les captifs, et amassant beaucoup d'argent il alla pieusement dans le pays des barbares pour délivrer les esclaves et ramener ses Brebis; parce qu'il était un pasteur pieux et vertueux: ce qu'il fit plusieurs fois. Il marchait dans la voie du salut, et était l'exécuteur des lois de Dieu. Il arrive à un village près duquel se trouvaient une montagne et un lac très profond. Un terrible dragon tourmentait les peuples voisins; il leur enlevait les animaux et les en-

fants. Les habitants du pays, saisis d'une grande frayeur, comme sous une influence diabolique, invoquaient le sort: la famille qu'il désignait offrait un enfant, qui était lié et jeté devant le dragon, afin que, par la mort de cet enfant, la bête fût réconciliée avec le peuple. En voyant cela, S^t Athénogène est saisi d'étonnement; il demande à cet enfant la cause pour laquelle il était lié, abandonné et sur le point d'être dévoré par le dragon, et priant dit: Grand Dieu, aidez-moi. Puis, faisant le signe de la croix sur l'enfant, il rompit les liens, resta auprès de lui: il priait et invoquait le nom de J.C. et, recueilli, il étendit les mains ainsi que l'enfant et les spectateurs, et parla ainsi: Dieu éternel, vous qui m'avez suggéré de venir en ce lieu, et fait voir cet enfant tout près d'être dévoré par la bête féroce, exaucez-moi, ou plutôt, écoutez cet enfant qui parle sincèrement. Venez à notre secours Seigneur, montrez la puissance de votre miséricorde, frappez, blessez le terrible dragon, affaiblissez-le, déchirez-le; afin que tous les spectateurs et les habitants de ce pays comprennent votre infinie et incompréhensible puissance, et glorifient éternellement votre grand